



**ՅՈՒՇԱՏԵՏՐ
ՆՈՐ
ՏԵՍԼԱԿԱՆԻ**

ՄԿՐՏԻՉ Լ. ՊՈՒԼՏՈՒՔԵԱՆ

**ՊԷՅՐՈՒԹ
ՅՈՒՆԻՍ 2004**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Բ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Գ. ՍՓԻՒՌԻ ՆԵՐԿԱՅ ԳՈՅԱՎԻՃԱԿԸ

Դ. ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Ե. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Զ. ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Է. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ը. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

DRAFT COPY

Ա. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Սփիւոքի երրորդ եւ չորրորդ սերունդներուն համար, ազգային հաւաքական ու անհատական ինքնութիւնը նոյնը չէ ինչ որ էր առաջին եւ երկրորդ սերունդներուն պարագային: Ինքնութիւնը կազմող հիմնական տարրերը՝ ազգային հաւատամք, նպատակ, մտայնութիւն, ասանդական սովորութիւններ, արժէքներ, ընկերային վարք ու բարք, տնտեսական կարգավիճակ եւ մշակութային ժառանգ, ժամանակի ընթացքին, էական փոփոխութիւններու ենթարկուած են տարբեր միջավայրերու ու պայմաններու ազդեցութեամբ:

Մինչդէռ՝ նոյն ժամանակամիջոցին մեր ազգային կառոյցները մնացած են ինչ որ էին տասնեակ տարիներ առաջ, իրենց վարչական անյարմարութիւններով, ստեղծելով խորացող խրամատներ տարբեր սերունդներու հետաքրքրութիւններուն, կարողականութեան ու ակնկալութիւններուն միջեւ:

Ուրեմն՝ անհրաժեշտ է որ ծրագրաւորենք մեր հասարակական ապագան, յստակօրէն սահմանուած կարճ, միջին եւ երկար ժամկետային նպատակներով ու անոնց իրագործումին յարմարաւետ կազմակերպչական միջոցներով, դիմադրելու՝ արտաքին եւ ներքին փոխուող պայմաններուն, բազմաբնոյթ վտանգներուն:

Որդեգրելով ռազմավարական մտածողութեան եղանակը պիտի փորձենք.

- Ա. Մատնանշել ու կեդրոնանալ կարելոր հարցերու վրայ
- Բ. Ընտրել բանալի, յարմար տեղեկութիւններ
- Գ. Հարցերը քննարկել իրենց ամենալայն ծիրին մէջ
- Դ. Հարցերը դիտել հեռանկարային տեսանկիւնէ
- Ե. Չատորոշել պատճառներն ու արդիւնքները
- Զ. Գնահատել դրոյապատճառներն ու հետեւանքները
- Է. Տրամաբանական մտածողութիւնը ընդելուզել ստեղծագործականին

Հասկնալու համար Սփիւոքի տազնապալի կենսական հարցերուն էութիւնը, անհրաժեշտ է քննարկել անցեալի դէպքերն ու ներկայ կացութիւնը, համապարփակ մօտեցումով, իրենց առթած դրական ու ժխտական արդիւնքներով՝ Սփիւոքի ու Հայաստանի անվտանգութեան պահպանման ու բարօրութեան զարգացման ուղղութեամբ:

Ամբողջական ախտաճանաչում մը կ'ենթադրէ ունենալ, բարոյական քաջութիւնը ընդունելու մեր հասարակական տկարութիւններն ու որոնելու անոնցմէ ձեռքազատուելու միջոցները: Նաեւ, արտաքին պատեհութիւններէն օգտուելու ու վտանգներուն դիմադրելու պատրաստականութիւնը:

Աշխատասիրութիւնը կ'ընդգրկէ ախտաճանաչումի հանգրուանէն անցնիլ ու.

- Ա. Բանաձեւել էական հարցերու քննարկման տարբերակներ
- Բ. Բաղդատական քննարկման ենթարկել առաջարկուած տարբերակներուն գործադրելիութիւնն ու արդիւնքին յաջողութիւնը
- Գ. Չատորոշել տուեալ ժամանակին ամենէն յարմարաւետ տարբերակը

Գործադրութեան ծրագիրը պէտք է բաւարարէ հետեւեալ հարցադրումները.

- Ի՞նչ պէտք է ընել
- Ի՞նչպէս պէտք է ընել
- Ո՞վ պիտի ընէ
- Ե՞րբ պիտի ըլլայ
- Ու՞ր պիտի ըլլայ
- Ի՞նչու՞ այս ձեւով պիտի ըլլայ
- Գործադրութեան ստուգման եղանակն ու չափանիշները ի՞նչ պիտի ըլլան

Բ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Հուսարական ինքնաճանաչումով ու առարկայական քննարկումով բանաձեւել ընդհանուր եւ ամբողջական հայեցողութիւն մը մեր ազգային կեանքի ներկայ իրավիճակին մասին: Ապա՝ սահմանել ազգային գաղափարախօսութիւն մը, իր արժեքահամակարգով եւ արժեքափետրով: Ստեղծել նպատակայարմար կազմակերպչական կառոյց ու յարմարաւետ միջոցներով իրագործել ծրագրուած նպատակներ, իրենց կարելութեան առաջնահերթութեան կարգով:

Հիմնուելով երկարաշունջ ազգային ռազմավարութեան, կազմակերպել եւ օգտագործել Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի Հայութեան ամբողջական կարելիութիւնները: Նպատակադրել իրադրութիւն մը ուր ամէն մէկ Հայ համայնք վերածուի ազգին մէկ գործօն տարրին, զգացումով, մտածումներով եւ գործով:

Յստակ նպատակներով եւ յարմարաւետ միջոցներով ապահովել Սփիւռքի Հայութեան ամբողջական համագործակցութիւնը: Ազգային զգացումները վերածել գործնապաշտ կապերու, յարմարաւետ իրաւունքներով եւ հրապուրիչ պատճառարկումներով:

Պահպանել Սփիւռքի Հայկական գաղութներու մշակութային ինքնութիւնը, բարելաւել անոնց տնտեսական ու ընկերային համակարգը եւ վերակազմաւորել հասարակական կեանքի ոլորտները, համերաշխ գործակցութեան ու միութեան գաղափարը վերածելով անհատական ու հուսարական յառաջդիմութեան հիմնաքարի:

Որպէս տարբեր երկիրներու քաղաքացիներ, ժամանակի ընթացքին, մեր ազգային ինքնութեան յեղաշրջումն ու աղաւաղումը անխուսափելի է: Միաժամանակ՝ պատկանիլ հուսարականութեան մը, բնական պահանջք մըն է ու ընկերային իրողութիւն: Ի՞նչպէս կարելի է հաշտեցնել այդ երկու հակոտնեայ մղումները, դրական ձեւով, անյետաձգելի մարտահրաւեր մըն է որ Սփիւռքի ազգային ղեկավարութիւնը պէտք է դիմակալէ, ի շահ ամէն Հայ անհատի եւ Հայաստանի Հանրապետութեան:

Պահպանել Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի քաղաքական ու զինուորական ապահովութիւնը, ինչպէս նաեւ իրագործել անոնց տնտեսական, ընկերային ու մշակութային յարատեւ բարգաւաճումը:

Ընդունիլ Սփիւռքի պատմական առկայութիւնը եւ զայն նկատել առանձին հուսարականութիւն մը, որ կը հպարտանայ Հայաստանի Հանրապետութեամբ եւ զայն կը նկատէ, ազգային ներշնչումի աղբիւր: Որպէսզի կասեցուի ձուլումի աւերը, ստեղծել կառուցողական, դրական եւ մնայուն ներգործօն փոխ-յարաբերութիւններ, նոյն ազգին երկու թելերուն միջեւ, իրենց իւրայատուկ ընկերային կառոյցներով եւ մտածողութեամբ. սակայն, ազգային ինքնութեան, բարգաւաճումի եւ կեանքի որակի բարելաւումի հասարակաց ու էական նոյնաման պահանջներով:

Սփիւռքի համագործակցութեամբ, որդեգրել համազգային աշխատանքային ծրագիր, հետապնդելու համար Հայկական Յեղասպանութեան համաշխարհային ճանաչումը եւ վերապրողներու ու անոնց ժառանգորդներուն անժամանցելի իրաւունքը ստանալու արդար, ամբողջական, բարոյական եւ նիւթական հատուցում:

Մշակել երկարաշունջ ծրագիրներ, նկատի առնելով ազգային պատմութեան ողբերգութիւններուն պատճառները, ու ներքին կազմակերպական ուժականութեամբ յարատեւ հուսարական ապահովութեան նոր պատնէշներ ստեղծել, օգտագործելով ներկայի ու ապագայի բոլոր ներքին ու արտաքին կարելիութիւնները: Անցեալի ու ապագայի հազարամեակներու հեռանկարով, ապրիլ ներկան որպէս պատմական ամբողջութեան մը մէկ էական հանգրուանը:

Գ. ՍՓԻՒՌԻ ՆԵՐԿԱՅ ԳՈՅԱՎԻՃԱԿԸ

Հասարակական կառույցներու ռազմավարական ծրագրաւորումի կարեւոր տարրերէն մէկն է, մշտական քննարկումներով, հանգրուանային արժէտորումներ կատարել, չորս գլխաւոր ուղղութիւններով. ներքին գորութիւն ու տկարութիւն եւ արտաքին վտանգներ ու օգտագործելի առիթներ:

Հաւաքական գորութեան դաշտին ընդարձակումն ու պահպանումը եւ տկարութիւններուն սրբագրումն ու բարեկարգումը, որպէս ներքնապէս հակակշռելի գործօններ, կարելի է բաղդատարար, աւելի հեշտօրէն ծրագրել ու գործադրել:

Մինչ, արտաքին վտանգներ դիմագրաւելու ու առիթներ օգտագործելու կարելիութիւնները, իրենց յարափոփոխ բնոյթով, շատ աւելի բարդ մարտահրաւերի հանգամանքը ունին: Քաղաքական, ընկերային, տնտեսական ու մշակութային բազմաբնոյթ առիթներ օգտագործելու ու վտանգներէ զուշանալու կարողութիւնը, կենթադրէ ունենալ տեսլական ու երկար ժամկէտային ընդհանուր ծրագիր, բնագոյային ճկունութիւն, յարմարելու համար միջազգային քաղաքականութեան յարափոփոխ պայմաններուն:

ՉՕՐՈՒԹԻՒՆ

- ◆ Սփիւռքը, իր աշխարհատարած ներկայութեամբ, ունի հիմնական կարողականութիւնը, տեղական ու միջազգային քաղաքական շրջանակներու մէջ, ստեղծելու ու զարգացնելու, հասարակական գործոն ներկայութիւն ու կազմակերպուած քաղաքական ճնշումի լծակներ, նպատակադրելով իրագործումը համազգային նպատակասլաց ծրագիրներու:
- ◆ Հայկական Յեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ կատարուած աշխատանքը, իր միջազգային ուժականութեամբ, կը մնայ Հայկական ինքնութեան պահպանման կարեւոր խթաններէն մէկն է: Ամէն մէկ նոր յաջողութիւն համաշխարհային ճանաչումի ուղղութեամբ, խրախուսանք մըն է շարունակելու պայքարը բոլոր մակարդակներու վրայ:
- ◆ Հայ ժողովուրդը ընդհանրապէս իր պատմութեան ընթացքին եւ մանաւանդ՝ ցեղասպանութենէն վերապրող տարագիր համայնքները, վայելած են միջազգային պաշտօնական ու ժողովրդական լայն շրջանակներու բարեացակամութիւնը: Իրենց նկարագրային բարենասանութիւններով ու հաւատարմութեամբ կարողացած են միջազգային դրական հանրային կարծիք ստեղծել:
- ◆ Գոյութիւն ունեցող զգացական զօրաւոր կապը Հայկական արմատներու հանդէպ, կարեւոր նախադրեալ մըն է, որակական փոփոխութիւններ ներմուծելով հասնելու հասարակական զօրակցութեան գործնապաշտ նոր դրութեան մը: Գոյութիւն ունեցող համայնգային կառույցներն ու ընկերային կապերը իրենց ուժականութիւնը կրնան պահպանել ու զօրացնել՝ բաւարարելով յաւելեալ հոգեբանական ու ընկերային պահանջքներ:
- ◆ Հակառակ ներկայ շրջանի քաղաքական, տնտեսական ու ընկերային դժուարութիւններուն, Հայաստանը կը մնայ յոյսի աղբիւր ու հաւաքական ապահովութեան մնայուն պատմէշ: Իր հազարամեակներու պատմութիւնը, ապրող փաստ մըն է Հայ ժողովուրդի տոկուն մշտականութեան, խրախուսանք մը դիմադրելու ներկայ դժուարութիւններուն եւ ծրագրելու՝ աւելի լուսաւոր ապագաներ:
- ◆ Հայաստան, իր նոր ու մանաւանդ՝ պատմական մշակութային հարստութիւններով կը շարունակէ ներշնչել սերունդներ, կերտելով հաւաքական հպարտութեան շարժան իթներ:

- ◆ Սփիւոքը, իր միջազգային լեզուներու գիտութեամբ, բարեկամութիւններու ու գործարարական կապերու ցանցով, ունի բաւարար ուժականութիւն, հասնելու համար աւելի ազդեցիկ ոլորտներու ու ընդարձակելու անոնց դաշտը:
- ◆ Որպէս տարբեր երկիրներու ամբողջական քաղաքացիներ, իրենց քաղաքական, տնտեսական ու ընկերային կապերով, անհատական ու խմբային միջոցառումներով, Սփիւոքի հասարարական կառոյցները, բազմաթիւ երկիրներու մէջ, ունին տեղական քաղաքական լծակներ, որոնց պահպանման ու բարելաման համար անհրաժեշտ է որդեգրել համադրական ու ներդաշնակ գործելակերպ մը:
- ◆ Սփիւոքի տարբեր սերունդները, իրենց ուսումնական տարածականութեամբ ու մակարդակով, կը գրաւեն յարաբերաբար լաւ դիրք մը: Համալսարանական շրջանաւարտներու ու մասնագէտներու մեծ տոկոսը կը դասուին ազատ ասպարէզի մասնագիտութիւններու մէջ: Էական է ընդլայնել անոնց դաշտը, ընդգրկելու համար հասարարական տարբեր գիտութիւններ, բաւարարելու համար ազգային հասարարական պահանջքներ, քաղաքական, տնտեսական, ընկերային ու փոխ-յարաբերութիւններու մարզերուն մէջ:

ՏԿԱՐՈՒԹԻՒՆ

- ◆ Սզգային հիմնական նպատակներու անորոշութիւնը Սփիւոքի կենսունակութիւնը ջլատող ամէնէն կարեւոր տարրէրէն մէկն է: Առանց հաւաստի հեռանկարներու, կարելի չէ արդիւնաւետ հասարարական գործունէութիւն տարածել: Երրորդ եւ չորրորդ սերունդներու աճող դասալքութեան կարեւոր պատճառներէն մէկն է, հայապահպանման կարեւորութեան գործնական ու համոզիչ պատասխաններու բացակայութիւնը:
- ◆ Առկայ դրութեամբ, միայն կարճ ժամկետային նպատակակէտերու հետապնդումը, երբեմն իրենց ժամանակավրէպ ու ապարդիւն բովանդակութեամբ, կ'ունենան իրենց ժխտական արդարադարձը, հայապահպանման այլ մարզերուն մէջ: Մինչ՝ եթէ կարելի ըլլայ կարճ եւ միջին ժամկետային նպատակակէտերը գետեղել, հաւաստի ազգային նպատակներու ծիրին մէջ, արդիւնքը կրնայ աւելի դրական ըլլալ:
- ◆ Որպէս ընկերային էակներ, կարիքը ունինք պատկանելու զանազան տեսակի խմբաւորումներու, նախընտրաբար յարելով անոնց որոնք լաւագոյն ձեւով կը բաւարարեն մեր մարդկային հոգեկան ու նիւթական պահանջքները: Այդ կարիքները կարելի է խտացնել, գոյութեանական համապարփակ առաւելութիւն հասկացողութեան մէջ: Կարգ մը երեւոյթներ կրնան ցուցանիչ ըլլալ մեր ինքնութեան պահպանման ատակութեան մասին: Հայկական ինքնութենէն պարպտող անհատներու աճող թիւը, ցուցանիչ մըն է մեր հասարարական տկարութեան:
- ◆ Սփիւոքի ազգային կառոյցները, անցեալին ունեցած են իրենց դրական ներդրումը: Այժմ, պայման է զանոնք վերանորոգել, նպատակային նոր պարունակով ու վարչագիտական յարմարաւետ միջոցառումներով: Աւանդական կառոյցներու կողքին, բազմատեսակ ընկերային ծառայութեան գրասենեակներու ստեղծումը հասարարական կարիք մըն է, ու կարեւոր նախադրեալ մը՝ ընկերային ու տնտեսական զօրակցութեան:
- ◆ Քաղաքական կուսակցութիւններու միջեւ եղած պայքարը ունի իր դրական ու ժխտական դրսեւորումը: Գաղափարներու ու աշխատանքներու տարբերութիւնը կրնան դրական ըլլալ, եթէ որոշ գերագոյն մակարդակի մը վրայ միասնական համաձայնութիւն գոյանայ, ազգային հիմնահարցերու հետապնդման ուղղութեամբ:
- ◆ Կուսակցութիւններու ներքին պայքարը, բնական ու առողջ երեւոյթ է, եթէ անոր դրդապատճառը, անձնական փառասիրութիւններէ ու շահասիրութիւններէ աւելի հասարարական շինիչ գործունէութեան յարմարաւետ միջոցներու ուղղութեամբ

կարծիքներու ու աշխատածներու տարբերութենէն կը բխի: Այլապէս՝ կուսակցութիւններու քանդումին կարելորագոյն ազդակին կը վերածուի:

♦ Ազգային եկեղեցիի առկայ բաժանումը, Սփիւռքի կարգ մը երկիրներուն մէջ, իր հատուածական ներկայ կարգավիճակով ու ժխտական դրսեւորումներով, կը մնայ մտահոգիչ: Կաթողիկոսական զոյգ աթոռներու Վեհաբար Հայրապետները, խորհրդակցաբար կրնան գործնապաշտ նոր տնօրինումներով, զիրար ամբողջացնելու միտումով, գործակցութեան նոր պայմաններ ստեղծել, ի շահ՝ Հայ Առաքելական Եկեղեցիին ազգային ու հոգեւոր առաքելութեան հեզասահ ու արդիւնաբեր գործունէութեան:

♦ Ցաւալի է նկատել, ազգային անհատական ու հաւաքական արժէքներու այլասերումը, Հայոյ աւանդական դրական տիպարը ժխտականի վերածելով: Հայաստանի մէջ եւ այլուր, փոքրամասնութեան մը մեղքերու վրայ հիմնուած անպատասխանատու գործառնութիւններն ու հասարակական յորի փոխ-յարաբերութիւնները, իրենց ժխտական անդրադարձը կ'ունենան Հայոյ աւանդական պատկերը այլանդակելով: Վկայ՝ կարգ մը երկիրներու մէջ բանտարկեալներու յարաբերաբար մեծ թիւը:

♦ Ազգային ընկերային իմաստասիրութեան բացակայութեան, պատեհապաշտութիւնը, գործարարական ու ընկերային ոլորտներու մէջ, հետեւելով շուկայական շահամոլութեան պահանջներուն, իր սանձարձակ մրցակցութեան կործանիչ հետեւանքներով, հաւաքական ինքնասպանութեան սերմերը կը ցանն: Վկայ՝ կարգ մը քաղաքներու մէջ աւանդական արհեստներու տկարացումը որպէս արդիւնք՝ ապօրինի մրցակցութեան, նոյնիսկ ազգակից բարեկամներու միջեւ:

♦ Որպէս հետեւանք անհատական ու հաւաքական իրագործումներու արժէքային անկումին, Հայաստանի ու Սփիւռքի տարածքին, հագուագիւտ պարագաներուն տակաւին կարելի է անհատ անձերու անունները յեշել որպէս համաշխարհային համբաւ ունեցող գիտնական, արուեստագէտ, քաղաքագէտ կամ մարզիկ: Մինչ՝ նոյնօրինակ տարբեր հաւաքականութիւններ իրենց բազմահազար հպարտանալի անձնաւորութիւններով իրենց ամենօրեայ յաջողութիւնները կը ծանուցանեն համաշխարհային լրատուական բոլոր միջոցներով:

♦ Ղեկավարութեան հանդէպ վստահութեան նուազումը բնական հետեւանքն է, ազգային տեսլականի բացակայութեան, անորոշ ուղղութիւններով կատարուած ապարդիւն աշխատանքին: Ղեկավարութեան ամէնէն Էական առաքելութիւնը՝ իր հետեւորդներուն ուղղութիւն տալու կարողութեան ու հանգամանքին մէջ կը կայանայ: Սակայն՝ այն պայմանով որ ղեկավարը յստակ ու համոզիչ գաղափար ունենայ իր ուղղութեան յարմարաւետութեան վրայ:

♦ Նոր սերունդներու, Հայկական կազմակերպութիւններու անդամակցելու նուազող հետաքրքրութիւնը կարելի է բացատրել, հաւատքի անբաւարարութեամբ, ծրագիրներու անհրապոյր բովանդակութեամբ, անհատական ու հաւաքական քաջալերանքի ու զնահատանքի անյարմարութիւններով եւ մանաւանդ՝ նպատակներու անորոշութեամբ:

♦ Համայնքային հարցերու վերաբերեալ նոր սերունդներու անտարբերութիւնը, հետեւանքն են ղեկավարութեան ժամանակավրէպ աշխատամիջոցներուն ու աշխատածներուն: Անտարբերութիւնը կը ծնի հետաքրքրութիւն ստեղծող ծրագիրներու սովէն: Երիտասարդութիւնը հետաքրքրող հարցերը միշտ գոյութիւն ունեցած են եւ տակաւին ունին, սակայն Էական է զանոնք դասատրել գործակցաբար, նոր սերունդներու անդամներուն հետ, նկատի առնելով անոնց երազներն ու ակընկալութիւնները:

♦ Մեծաթիւ աթոռամով կամաւոր հասարակական գործիչներ, իրենց հասարակական կեանքի փորձառութիւնը կրնան շատ աւելի յարմարաւետ ձեւով փոխանցել նոր

սերունդներու ներկայացուցիչներուն, ընդհանրապես անոնց որպէս խորհրդատու, քաջալերելով անոնց խանդավարութիւնը ու գնահատելով անոնց աշխատանքին արդիւնքները: Սփիւռքի Հայկական կառոյցները կարիքը ունին հազարաւոր երիտասարդ հաւատարմ տարրերու, ստանձնելու համար նոր պատասխանատուութիւններ, տեսական ու գործնական աշխատանքներով:

♦ Քաղաքական ու ընկերային թերաճ մտածողութիւնը արգելք եղած է նորարարական ծրագիրներու մշակման: Ներքին ու արտաքին փոխ-յարաբերութիւնները մշակուած են անհատական ու պատեհական նպատառումներով, առանց տեսական հիմնական մտածողութեան ենթահողին: Փոխ-յարաբերութիւնները, իրենց հորիզոնական ու ուղղահայեաց, ուղղութիւններով եղած են անբաւարար, ղեկավարութեան ու անդամակցութեան միջեւ, ինչպէս նաեւ՝ ներազգային տարբեր կազմակերպութիւններու պարագային:

♦ Տնտեսական մարզին մէջ, անհատական ձեռնարկութիւնները կը շարունակեն տիրապետել որպէս արտայտութիւն, տնտեսական պատմական մտայնութեան: Անհատապաշտ մտածութեամբ կարելի չէ եղած տակաւին ստեղծել գործարարական մեծ ընկերութիւններ ու հիմքը դնել ներազգային տնտեսական ոստայնի մը իր ուրոյն օրինական դրութեամբ:

ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ ԱՌԻԹ

♦ Նկատի ունենալով, Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ կատարուող աշխատանքին աճող կարելիութիւններն ու իրագործուող համգորումանային յաջողութիւնները, համազգային աւելի ներդաշնակ ու վճռական միջոցառումներով, նպատակադրել ազգային ու անհատական անգնահատելի կորուստներու հատուցումը ու Հայկական իրաւունքներու վերահաստատումը պատմական Հայաստանի սահմաններուն մէջ:

♦ Միջազգային մշակութային փոխ-յարաբերութիւններով, գաղափարներու եւ փորձառութիւններու փոխանակումը, շատ կարեւոր միջոց մըն է հասկնալու համար եսն ու ուրիշը, իրենց անհատական ու հաւաքական ծաւալներով: Փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած մտեցումով կարելի է հասկնալ ու ընդունիլ տարբեր արժէքներ, ինչպէս որ են: Մշակոյթը, մեծապէս կը նպաստէ անհատներու ու հաւաքականութիւններու միջեւ բարեացակամութիւններու ստեղծման մէջ: Հետեւաբար, Սփիւռքի մշակութային կարողականութիւնը կը բազմապատկուի տարբեր երկիրներու ստեղծագործական արդիւնաբերութեան լաւագոյն արտայայտութիւններուն բնական ներմուծումով:

♦ Սփիւռքը, իր տարողութեամբ ու բազմազանութեամբ տասնամեակներու ընթացքին կերտած է բազմաբնոյթ բարեկամութիւններու ցանցեր որոնց կարեւորութիւնը յաճախ կը դրսեւորուի միջազգային հանրային կարծիքի դրական դիրքորոշումներով: Սակայն կը մնան օգտագործելի այլ գործնապաշտ ու գործնական մոջոցներ, ընդլայնելու ու ամրապնդելու համար քաղաքական ու հասարակական փոխ-յարաբերութիւններու դաշտը, ազգային հիմնահարցերուն բարենպաստ լուծումները գտնելու մեր աշխատանքներուն ընթացքին:

♦ Հայաստանի անկախութենէն իվեր, Ամերիկայի Միացեալ Նահանգներու ու Եւրոպական Միութեան բազմաթիւ երկիրներուն մէջ, Հայկական կազմակերպութիւններ ու գործօն անհատներ, իրենց քաղաքական ու հասարակական կապերով, նիւթական ու բարոյական, կարեւոր ներդրումներ ապահովեցին, Հայաստանի քաղաքական ու տնտեսական աճումին նպաստող, քարոզչական գործնապաշտ աշխատանքներով: Կարելի է այդ աշխատանքին ծիրը ընդլայնել ու տարողութիւնը բազմապատկել, մնայուն մասնագիտական աշխատակազմներու արհեստավարժ միջոցառումներով:

- ◆ Սփիւռքի անհատական ու հաւաքական փորձառութիւններն ու գիտելիքները, իրենց բազմաձևակութային բնոյթով, կը կազմեն հսկայական ներուժ մը: Կարելի է օգտագործել զայն եթէ կարենանք հունաւորել մեր ազգային կեանքը, իրագործելի նպատակներու ուղղութեամբ:
- ◆ Սփիւռքը, բազմաքաղաքացիական իր ներկայ օրինավիճակով, կը պարունակէ մարդուժի հսկայական ուժականութիւն մը, որ տակաւին կը մնայ օգտագործելի, որպէս ազգային ապահովութեան միջազգային յենարան:
- ◆ Համաշխարհայնացում իր վտանգներուն կողքին կը ստեղծէ բազմազան օգտագործելի առիթներ ու միջոցներ պահպանելու համար տարբերութիւններն ու իրայատուկ ինքնութիւնները: Մանաւանդ՝ ստեղծելով կարելիութիւններ մշակութային ստեղծագործութիւններու անսահման ու արագ տարածման:
- ◆ Համացանցի ընճայած դիրութիւններու օգտագործումը, համազգային փոխ-յարաբերութիւններու ծիրին մէջ, իր անհուն կարելիութիւններով հանդերձ, տակաւին կը մնայ թերի ու սահմանափակ: Կարեւորագոյն արգելակը կը մնայ ուղղագրութեան հարցը իր գործնական բազմաթիւ ժխտական հետեւանքներով: Տառաշարքի բազմազանութիւնը իր անհաճոյ անակնկալներով, վերածուած է գրաւոր Նոր Բաբելոնի իր գործնական ու փոխաբերական իմաստներով: Միացեալ ուղղագրութեան մը բացակայութեան, համացանցի վրայ, Հայերէնի միացեալ ուղղագրական սրբագրութեան, ինչպէս նաեւ համակարգչային թարգմանչական ծրագիրները կը մնան անհասանելի: Ու, մէկ ժողովուրդի ու մէկ մշակոյթի աշխարհատարած անդամները, յաճախ կը ստիպուին օգտագործել իտալերէն տարբերը, իրենց համացանցային նամակագրութեան մէջ: Մինչ՝ լեզուական համազգային, գործնապաշտ, հասարակ յայտարարի մը որդեգրումով, որքան կարելի պիտի ըլլար համաշխարհայնացումի անհուն կարելիութիւնները օգտագործել Հայկական մշակոյթի տարածման ու զօրացման:

ՎՏԱՆԳ

- ◆ Համաշխարհայնացումի վտանգին կարելի է դիմադրել, կազմակերպչական միջոցներով ու մրցակցական ստեղծագործական միջոցառումներով, ստեղծելով բարձր որակի մշակութային ու տնտեսական արտադրութիւններ: Չինաստանի մրցակցական զօրութիւնը օրինակելի իրողութիւն մըն է, փաստելու համար որ կարելի է համաշխարհայնացումի վտանգը շրջանցել, հասնելու համար տնտեսական ու ընկերային բարգաւաճ վիճակի, միաժամանակ՝ պահպանելով ազգային իրայատուկ զաղափարախօսութիւնն ու առժէքները:
- ◆ Ազգային հաւատամքի մը բացակայութեան, Հայկական ինքնութեան պահպանման առաւելութիւններն ու անպատեհութիւնները նկատի առնելով, հաւատքի տկարացումը, զարմանալի երեւոյթ մը չէ: Առանց հաւատքի ու համոզիչ պատճառաբանութիւններու, բնական է որ մարդկային, անհատական կարիքներն ու ցանկութիւնները ստանան նախապատուութիւն, տարբեր միջոցներով ու հոգեբանութեամբ:
- ◆ Գերազանցելու բնական մղումը կը զօրանայ հաւաքական քաջալերանքով ու այլ օրինակելի հերոսներու գոյութեամբ: Գերազանցելու մղումը կը տկարանայ, պատճառ արկումի տկարացումով ու արժէքներու փոփոխութեամբ: Համահայկական առումով, ականյայտ երեւոյթ մըն է, միջազգային երկնակամարներու վրայ Հայ աստղերու թիւին նօսրացումը, գիտութեան, արուեստի, մարզական աշխարհի, քաղաքական, ընկերային, տնտեսական ու փոխ-յարաբերութիւններու մարզերուն մէջ:
- ◆ Հայերէն լեզուն իր խորհրդնշական արժէքն աւելի, որպէս գործնական կեանքի փոխ-յարաբերութիւններու միջոց, իր առօրեայ գործածութեան պատեհ առիթներու նուազումով, վտանգուած է տարբեր լեզուներու գործնապաշտ առաւելութենէն:

- ♦ Որպես փոքրամասնություններ, մանաւանդ արեւմտեան քրիստոնէայ քաղաքակրթութիւններու, տեսա-լսողական ամենօրեայ տեղեկութիւններու տարափին ազդեցութեամբ, մշակութային արանդական արտայայտութիւնները բնականաբար, կը կորսնցնեն իրենց հետաքրքրութիւնը:
- ♦ Հայկական վարժարաններու մանկապարտէզի դասարաններու աշակերտութեան թիւի նուազումը կարելոք ահազանգ մըն է Հայեցի դաստիարակութեան տասնամեակ մը ետք դիմագրաւելիք ատելի սաստկացող տագնապին: Կրթական, տնտեսական, ընկերային, հոգեբանական պատճառները, անտարբերութենէ ատելի, դրսեւորումն են ինքնութեան տագնապին:
- ♦ Քաղաքացիական եւ Հայկական ինքնութեան պահպանման միջոյն ստեղծուած բնական հակասութիւնները, իրենց առկայ դրութեամբ, կը գտնուին վտանգաւոր հանգրուանի մը մէջ: Ինչպէ՞ս կարելի է յարգել մեր քաղաքացիական իրաւունքներն ու պարտաւորութիւնները, պահպանելով հանդերձ՝ մեր ինքնութեան Էական տարրերը: Տրանսայի ու Եւրոպական կարգ մը այլ երկիրներու մէջ, վերջին քանի մը տասնամեակներուն, հակառակ իրենց նօսքացող թիւին, Հայկական կազմակերպութիւններ ու անհատ անձեր, շատ կարելոք ներդրում ունեցան քաղաքական, փոխ-յարաբերութիւններու ու հանրային կարծիք ստեղծող ոլորտներու մէջ: Իրենց տեղական լեզուներու տիրապետութեամբ, բարեկամական կապերով ու քաղաքացիական պարտականութիւններու ամբողջական նուիրածութեամբ, կարողացան նոր հաւասարակշռութիւն ստեղծել, երկակի ինքնութիւններու միջոյն: Երբեմն, զոհելով իրենց մայրենին, ի գին՝ հազարաւոր այլ մայրենիներու պահպանման՝ այլուր:
- ♦ Վերջին տասնամեակներուն, Սփիւքի զանազան գաղութներուն մէջ, նկատելի է կապերու թուլացումը հասարակական կազմակերպութիւններու ղեկավարութեան ու անհատներու միջոյն: Անհատները իրենց իւրայատուկ մտածողութեամբ, գոյութեանական մտահոգութիւններով ու մարդկային տենչերով, չեն բաւարարուիր հասարակական ներկայ դրութեան գործունէութեամբ ու մանաւանդ՝ ակնածանքով չեն դիտեր ղեկավարութեան կատարած աշխատանքն ու անոր արդիւնքը:

Դ. ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Սփիւքը ժամանակաւոր կայա՞ն է թէ վերջնական լուծում: Եթէ կայան է դէպի ու՞ր: Եթէ վերջնական լուծում մըն է, պէտք է խորհրդածել անոր յարափոփոխ դերին մասին, փորձելով գայն վերածել յստակ նպատակներ ու արդիւնաբեր գործունէութիւն ունեցող Հաւաքականութիւններու:

Հիմնակէտ ունենալով ազգային ղեկավարութեան ներկայ մտածողութեան անլուծելի, աշխատանքի ձեւին նպատակային անյարմարութիւններն ու հաւաքական հեռանկարային ծրագիրներու չգոյութիւնը, ի՞նչ կրնայ ըլլալ Սփիւքի իրավիճակը ճ.շ .02 :00 տարի ետք:

Հետեւեալ չորս կարելիութիւնները կ'ընդգրկեն Սփիւքի ապագայի զարգացման հաւանականութիւնները.

ա. Ժամանակաւոր գոյութիւն

Ժամանակաւոր գոյութիւնը կրնայ ըլլալ աննպատակ ու պարտաւորական եւ կամ՝ նպատակասլաց ու հաւատաւոր:

Սփիւքի ներկայ իրադրութեան իրապաշտ վերժանումը ցոյց կու տայ թէ, աննպատակ ու պարտաւորական ժամանակաւոր գոյութեան հաւանականութիւնը շատ ատելի մօտ է իրականութեան: Տեսլապաշտ կեդրոնական ազգային ղեկավարութեան մը ու նպատակայարմար ապագայապաշտ համապարփակ ծրագիրներու բացակայութեան, Հայկական համայնքները կ'այլափոխուին առաքընթաց,

հաւաքական պատճառարկութեան անբաւարարութենէն սնանող անտարբերութիւնէ ու խամրող հպարտութիւններու յուսալքումի առաջնորդող աճող ախտէն: Այս պարագային՝ անիմաստ կը դառնան, Հայապահպանումի առկայ բոլոր ծրագիրներն ու աշխատանքները:

Ժամանակաւոր գոյութեան երկրորդ վարկածը, իր նպատակասլաց ու հաւատաւոր դրութեամբ, կ'ենթադրէ ունենալ ապագայի տեսիլք ու հանգրուանային, կազմակերպել, նպատակասլաց, երկարաշունջ աշխատանք: Դէպի ո՞ր, ե՞րբ ու ի՞նչպէս հարցադրումներուն հաւաստի պատասխաններով: Դէպի Հայաստան, թէ հեռաւոր ամերիկաներ, որոշեալ թէ անորոշ ժամանակի ընթացքին, անհատական նախաձեռնութիւններով թէ՞ հաւաքական կազմակերպութեամբ:

Ազգային պատմութիւնը բեղուն է, Հայկական բարգաւաճ գաղութներու բազմաթիւ օրինակներով, իրենց ժամանակաւոր գոյութեան տեսակաւոր երկարակեցութեամբ: Հիրընկալ երկիրներու կրօնական տարբերութիւնը, ընհանրապէս իր դրական ազդեցութիւնը ունեցած է ազգային ինքնութեան պահպանման մէջ: Մինչ՝ քրիստոնէական երկիրներու պարագային, կրօնական ու մշակութային Էական տարբերութիւններու բացակայութեան, ձուլումը եղած է շատ աւելի արագ:

Չանգուածային ներգաղթներուն վեջինը, իր ազգայնական հերոսապատումներով ու մարդկային դժուարութիւններու հոգեբանական բարդոյթներով, տասնեակ տարիներ ետք, տակաւին կը մնայ ուսումնասիրելի միթ իր հոգեբանական եւ ընկերային դրսեւորումներով:

Առկայ հաւաքական մտածողութեամբ ու գործելակերպի կրաւորականութեամբ «ժամանակաւոր գոյութիւն» տարբերասակն է որ շատ հաւանաբար շարունակէ տիրապետել: Այժմ, Սփիւռքահայութիւնը կարելի է բաժնել երկու գլխաւոր հատուածներու, անշուշտ բազմաթիւ ստորաբաժանումներով.

ա. Հաւատաւոր ու գործօն անհատներ, որոնք որպէս ազգային գործիչներ, դաստիարակներ, մտաւորականներ եւ պարզ անձեր կ'ապրին որպէս Հայ, ու համբերութեամբ կը փորձեն մեր ազգային արժէքներուն ջահը փոխանձել կրաւորական հատուածին:

բ. Կրաւորական մեծամասնութիւնը, առաջնահերդութիւնը տալով իր մարդկային մտահոգութիւններուն, ազգային ինքնութեան մաշումը կ'ընդունի լռելեայն, երբեմն ցաւելով ու յաճախ անտարբերութեամբ:

Առաջին հատուածը պարզապէս կը տքնի երկարաձգելու երկրորդ հատուածին հաւաքական ինքնութեան հոգեւարը եւ, երբեմն, որպէս արդիւնք յուսախաբութիւններու ու յուսահատութիւններու, լուռ վկան ըլլալու իրենց զաւակներուն անդամակցութեան՝ կրաւորական հիւծող հատուածին:

բ. Պատմութեան կրկնութիւն

Հիւծող հաւաքականութիւններ, նոր գաղթականութիւններու աւիւնով վերանորոգուլով, կը շարունակեն վերապրիլ, ու պատմութեան կրկնութեամբ, որպէս գաղթական Հայ բեկորներ, քանի մը սերունդ եւս կ'երկարաձգեն իրենց գոյութիւնը:

Առանց հեռակայ ազգային ու հասարակական նպատակներու, անհատ անձեր, նախընտրելով իրենց անհատական երջանկութեան հետապնդումը, կը հեռանան իրենց ազգային արմատները յիշեցնող հաւաքական կառոյցներէն ու խորհրդմշակական կապերէն, իրենց ետին ձգելով անհատ հայերու Մատրասեան յուշեր:

«Պատմութեան կրկնութիւնը» պարզապէս երկարձգումն է «ժամանակաւոր գոյութեան» աննպատակ նօսրացող հաւաքականութիւններու ու անհատ անձերու որոնք բուսական անտարբերութեամբ հազուագիւտ պարագաներուն կը փորձեն պահպանել իրենց ազգային ինքնութիւնը, զգացական յիշողութեամբ:

գ. Հրաշքներ կրնան պատահիլ

Հայաստանի Հանրապետության տնտեսական առազընթաց զարգացումով, ընկերային բարեկարգումը նոր համակարգ մը կը ստեղծուի, իր կենսամակարդակի, բարօրության եւ մարդկային զարգացման մակարդակի բարձրացումով, բաղդատմամբ՝ Սփիւռքի կարգ մը համայնքներուն առկայ կացութեան: Հաւաքական ներգաղթը կը վերածուի զգացականէն աւելի, գոյութեանական անհատական ու հաւաքական առաւելութեան եւ ապահովութեան:

Այն՝ «հրաշքներ կրնան պատահիլ»: Հայը կրնայ ամբողջական Հայ մնալ միայն՝ Արարատի շուրջ: Այդ կը փաստէ հազարամեաներու ողբերգութիւններէն վերապրած Հայոց պատմութիւնը: Սակայն «վերադարձ դէպի Արարատ»ը կրնայ իրականանալ այն պարագային, երբ գոյութեանական յարմար պայմաններ ստեղծուին Հայաստանի Հանրապետութեան տարածքին, կեանքի մակարդակի առազընդաց ու տեսական զարգացումով ու ազգային սահմանելի արժէքներու բծախնդիր յարգանքով:

դ. Ստեղծագործական իմաստութիւն

Քաղաքան, ընկերային, տնտեսական համապարփակ տեսլականով ու յարմարաւետ կազմակերպչական կառոյցներով Հայկական ինքնութիւնը կը վերածուի գոյութեանական առաւելութեան, ու Սփիւռքը կը վերածուի զօրակցական կուռ հաւաքականութիւններու ցանցի՝ հասարակաց հաւատամքով, արժէքներով ու ազգային նպատակներով:

Սակայն ի՞նչ կը նշանակէ գոյութեանական առաւելութիւն: Ըլլալ զօրակցական ցանցի մը գործօն անդամը: Զոգալ առանձին դժուարութիւններ դիմագրաւելու պարագային: Փոխադարձաբար, հասնիլ կարիքաւորին՝ բնագոյաբար: Դժուարութիւններն ու կարիքները ոչ-անպայման նիւթական են: Երբեմն՝ տեղեկութիւն մը, բարեխօսութիւն մը, միջամտութիւն մը, կարեկցութեան արտայայտութիւն մը նոյնքան կարեւոր են որքան նիւթական օգնութիւնը: Համայնքի մը պատկանիլը պէտք է ունենայ իր ամենօրեայ մանր ու հեռակայ էական առաւելութիւնները : Առանց այդ դոյզն առաւելութիւններուն, համայնքը կը վերածուի եսակեդրոն անհատներէ կազմուած հաւաքականութիւններու՝ առանց հասարակաց նպատակներու:

Սփիւռքի համայնքները ունին հսկայական, օգտագործելի մարդուժ մը: Եթէ կարելի ըլլայ զայն կազմակերպել Համահայկական հաւաստի ծրագիրներու շուրջ, իր ուժը կը բազմապատկուի:

«Ստեղծագործական իմաստութիւն»ը կը պահանջէ որ Սփիւռքը վերակազմաւորուի, ստեղծելով հաւաքական պատճառարկումի յարմարաւետ միջոցներ, նպատակադրելով ստեղծել տնտեսական ու ընկերային հրապուրիչ հաւաքական գոյավիճակ, Հայ անհատին տալով մրցակցական առաւելութեան բաւարարութիւն ու խթանիչ կորով՝ պահպանելու իր ինքնութիւնը եւ տարածելու իր մշակութային ժառանգը: Ի շահ՝ անէն անհատ Հայու, Սփիւռքի հաւաքականութիւններուն ու Հայաստանի Հանրապետութեան, եւ որպէս ազգային ապահովութեան հաւելելալ լծակ:

Հաւաքական պատճառարկումի ամենէն էական նախապայմանն է ունենալ հասարարական փոխ-յարաբերութիւններու համաձայնական սկզբունքներ ու յարգելի օրէնքներ: Օրէնքներ, որոնք կը կանոնաւորեն քաղաքական ու ընկերային փոխադարձ իրաւունքներն ու պարտականութիւնները: Առանց համաձայնական օրէնքներու ու անոնց հաւատաւոր գործադրութեան, ընկերային զօրակցութիւնը կը մնայ թոյլ: Հասարարական կեանքը հիմնուած է գործակցութեան ու փոխադարձութեան գաղափարներու վրայ, անհատին բարօրութիւնը կախելալ ըլլալով ընդհանուրին ջանքէն, ինչպէս նաեւ՝ ընդհանուրին բարօրութիւնը անհատներու ջանքէն: Որպէս գործնական եզրակացութիւն, առանց համաձայնական օրէնքներու վրայ հիմնուած ընկերային զօրակցական դրութեան մը գոյութեան, հասարարական կեանքը կը վերածուի կեդրոնախոյս, եսասէր անհատներու հաւաքանանութեան մը ուր միայն անհատական անբաւարար խղճի ձայնը կրնայ կանոնաւորել ընկերային բարդ փոխ-յարաբերութիւնները:

Ե. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Ո՞Վ Է ՏԻՊԱՐ ՀԱՅԸ

Սփիւոքի տարածքին, որո՞նք են Հայ ըլլալու յատկանիշները: Կարե՞լի է առարկայական տուեալներու հիման վրայ վճիռ արձակել Հայ ըլլալու որակին ու գիտակցութեան ուժգնութեան մասին: Կարելի՞ է հետեւեալ մասնակի յատկանիշներու հիման վրայ հայկականութեան տոկոսներ հաստատել.

Ծագում

- Հայկական անուն մականուն
- Հայկական ծագումի պատմական պղտոր յիշողութիւն
- Հայկական ծագում ունենալու գիտակցութիւն
- Հայ մայր կամ հայր
- Հայ մայր եւ հայր

Կրօնական ու ազգային տօներու օրինապահութիւն

- Բացառիկ առիթներով, ներկայ գտնուիլ եկեղեցական արարողութիւններու
- Կանոնաւոր ձեւով եկեղեցի յաճախել
- Ըլլալ հաւատացեալ ու մասնակցիլ աղօթքի
- Մասնակցիլ կրօնական բոլոր տօներուն
- Մասնակցիլ ազգային տօներու ոգեկոչումներուն

Դաստիարակութիւն

- Հայերէն խօսիլ
- Հայերէն խօսիլ եւ կարթալ
- Հայերէն խօսիլ, կարթալ եւ գրել
- Ստանալ հայեցի նախակրթական դաստիարակութիւն
- Ստանալ հայեցի երկրորդական ուսում
- Ստանալ հայագիտական համալսարանական ուսում

Ընկերային փոխ-յարաբերութիւն

- Հայ բարեկամներ ունենալ
- Հայկական շրջանակներու մէջ ունենալ ընտանեկան յարաբերութիւններ
- Պահպանել Հայկական ասանդակական սովորութիւններ
- Ամուսնանալ Հայու հետ
- Հրճուիլ Հայկական յաջողութիւններով ու մտահոգուիլ՝ տագնապներով
- Հայկական երաժշտութիւն ունկնդրել
- Հետաքրքրուիլ Հայկական մշակոյթի զանազան արտայայտութիւններով

Համայնքային գործունեութիւն

- Փոխ-յարաբերութիւն մշակել ուրիշ Հայերու հետ
- Հետեւիլ Հայութիւնը յուզող հարցերուն
- Հետեւիլ Հայաստանի լուրերուն
- Մասնակցիլ համայնքային գործունեութիւններու
- Գործոն մասնակցութիւն ունենալ Հայկական կազմակերպութեան մը մէջ
- Հաւատալ Հայապահպանման կարեւորութեան ու համոզել ուրիշները
- Հայրենադարձութիւնը նկատել հաւանական կարելիութիւն
- Գործնականապէս նպաստել Հայաստանի ու Սփիւոքի Հայութեան բարոյական վարկին ու բարօրութեան
- Օգտակար ըլլալ համայնքի կարիքաւոր հատուածին
- Նիւթական ներդրում ունենալ Հայաստանի մէջ կամ Սփիւոքի տարածքին

Այլք

Վերոյիշեալները իրենց անհամար երանգաւորումներով, միաձուլուելով Հայ ըլլալու գիտակցութեան տարբեր աստիճանաւորումներուն, միայն մօտաւոր ու անբաւարար պատասխան մը կրնան նկատուիլ: Մինչ աւելի ճշգրիտ պատասխաններ, կրնան ըլլալ նոյնքան բազմազան, որքան Սփիւքի Հայութեան թիւը, տուեալ ժամանակաշրջանի մը ու տարբեր աշխարհատարածքներու մէջ:

ՀԱՅ ԸԼԼԱԼՈՒ ԱՌԱԽԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՊԱՏԵՀՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Որոնք են հոգեբանական, բարոյական, քաղաքական, ընկերային, տնտեսական առ տելութիւններն ու անպատեհութիւնները Սփիւքի մէջ Հայ ըլլալու.

Ընթացիկ առաւելութիւններ

Հոգեբանական

- ♦ Հպարտութիւն՝ պատկանելու աշխարհի ամենահին ապրող ժողովուրդներէն մէկուն
- ♦ Զգացական կապը Արարատին, Նոյի տապանին նստավայրն ու մարդկութեան վերածնունդին օրրանը

Բարոյական

- ♦ Ընդհանրապէս դրական պատկերը Հայուն, իր պատմական նկարագրային յատկանիշներով, շեշտուած իր վերջին ցեղային մարտիրոսութեամբ եւ իր պատմական իրաւունքները վերահաստատելու պայքարով՝ սկսելով Հայկական Տեղասպանութեան ճանաչումով

Քաղաքական

- ♦ Որպէս սփիւքացած համայնքներ, իրենց համաշխարհային ներկայութեամբ
- ♦ Միացեալ Նահանգներու ու Եւրոպական Միութեան բազմաթիւ երկիրներու մէջ քաղաքական ճնշումի զարգացող գործունէութիւններ

Ընկերային

- ♦ Հայկական զօրակցութեան առասպելը, զգացական մակարդակի սահմանափակումով
- ♦ Հայ անհատներու ու Հայկական համայնքներու ներկայութիւնը, աշխարհի գրեթէ բոլոր երկրամասերուն մէջ

Տնտեսական

- ♦ Հազուադէպ պարագաներուն բարեգործական արարքներ, աղէտներու պարագային

Ներկայ անպատեհութիւններ

Հոգեբանական

- ♦ Ինքնութեան տագնապ, որպէս արդիւնք գոյութեանական բազմազան տարրերու ճնշումին ու արմատներուն կարճած մնալու բնագոյական ու զգացական պահանջքին
- ♦ Հպարտութեան ցամքող աղբիւրները, միջազգային նիւթապաշտական տարածուող արժէքներու ազդեցութեան տակ
- ♦ Հաւաքական տնտեսական զօրակցութեան բացակայութեան, կեդրոնախոյս, անհատապաշտ եւ եսասիրական ինքնաբաւութիւն

Բարոյական

- ♦ Հաւաքական բարոյական արժէքներու բացակայութեան կամ անտեսումի պատճառով, Հայուն գործարարական վստահելիութեան աղարտումը

Քաղաքական

- ♦ Քաղաքական մտածողութեան ու մշակոյթի անբաւարար զարգացում
- ♦ Անյարմար կազմակերպչական կառոյցներ, քաղաքական մնայուն ու շարունակական գործողութիւններու
- ♦ Թերաճ տեղական քաղաքական գործունէութիւններ
- ♦ Միջազգային քաղաքական բեմերուն վրայ, որոշումներ առնող մակարդակներու վրայ, անբաւարար ներկայութիւն

Ընկերային

- ♦ Հայկական զգացական զօրակցութեան անբաւարարութիւնը դիմագրաւելու քաղաքական, ընկերային ու տնտեսական տագնապներ
- ♦ Հայկական հասարակական կառոյցներէն հեռացողներու աճող թիւ

Տնտեսական

- ♦ Հայկական գործարարական ցանցերու չզոյութիւն
- ♦ Հայկական միջազգային դրամատնային ու ֆինանսական հաստատութիւններու չզոյութիւն
- ♦ Հայկական միջազգային մեծ ընկերութիւններու չզոյութիւն
- ♦ Հայկական գործարարական բարոյական համակարգի (business ethics) չզոյութիւն

Փոխ-յարաբերութիւններ

- ♦ Փոխ-յարաբերութիւններու մշակոյթի անբաւարար զարգացում
- ♦ Միջազգային փոխ-յարաբերութիւններու թերի ցանց
- ♦ Օտար լեզուներով տեսա-լսողական լրատուողական միջոցներու անբաւարար թիւ ու մակարդակ

Առաջադրանքներ, սահմանելու նոր նպատակակէտեր

Հոգեբանական

- ♦ Բարձրացնել մշակութային հպարտութիւններուն որակը, քանակը ու անոնց տարածումը միջազգային տեսա-լսողական ցանցերուն մէջ
- ♦ Գոյութեանական գործնական զօրակցութեամբ ստեղծել հոգեբանական խթաններ, պահպանելու ու զարգացնելու Հայկական ինքնութիւնը
- ♦ Զգացական զօրակցութիւնը վերածել գործնական ամենօրեայ առաւելութիւններու

Բարոյական

- ♦ Զարգացնել Հայուն հանդէպ գոյութիւն ունեցող ընդհանրապէս դրական մտապատկերը, յարգելով ընդհանրական բարոյական արժէքները, վառ պահելու համար միջազգային առկայ բարի կամեցողութեան տրամադրութիւնները

Քաղաքական

- ♦ Անհատական ու հասարակական ջանքերով, ստեղծել եւ զարգացնել բարեկամական ու ընկերային կապերու ցանց մը, կազմուած Հայ եւ ոչ-Հայ քաղաքական ու տնտեսական մարզերու մէջ հանրաժանօք անձնաւորութիւններէ, փոխ-շահաւէտական սկզբունքներով վերածուիւն Հայութեան հիմնահարցերու ջատագովներուն

Ընկերային

- ♦ Բոլոր գաղութներու մէջ, գործօն դերկատարութիւն ունենալ տեղական պատասխանատու ու ղեկավար ընկերային շրջանակներու մէջ
- ♦ Մշակութային բարձրորակ ձեռնարկներով, ստեղծել մնայուն կապեր, անհատներու, խմբակցութիւններու ու համայնքներու միջեւ

Տնտեսական

- ♦ Ստեղծել եւ կամ զարգացնել գոյութիւն ունեցող գործարարական ընկերակցութիւնները որպէս նախաքայլ Համահայկական գործարարական միջազգային ցանցի մը ստեղծման
- ♦ Մշակել համաձայնական համապարփակ գործարարական բարոյագիտական համակարգ մը (business ethics) համակարգելու համար ներքին ու արտաքին գործարարական երկարաշունջ փոխ-յարաբերութիւններու բնոյթը, հիմնուած՝ բացայայտ գնահատանքի ու պատիժի սկզբունքներուն վրայ

Փոխ-յարաբերութիւններ

- ♦ Փոխ-յարաբերութիւններու մշակոյթի անբաւարար զարգացում
- ♦ Միջազգային փոխ-յարաբերութիւններու թերի ցանց
- ♦ Օտար լեզուներով տեսա-լսողական լրատուողական միջոցներու անբաւարար թիւ ու մակարդակ
- ♦ Անհատական եւ հաւաքական փոխ-յարաբերութիւնները պէտք է ունենան բոլորին կողմէ ընդունուած ու յարգելի հասարակաց բարոյական համակարգ մը որպէս կառավարիչ, հսկողութեան յատուկ կառոյցներով: Իրաւունքներու ու պարտաւորութիւններու հաւասարակշռուած յարգանքը պէտք է հիմնուի մարդկային իրաւունքներու վրայ, ձգտելով մարդկային կեանքի բարօրութեան իր նիւթա-բարոյական բոլոր երանգներով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՊԱՏԵՀՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սփիւռքի տարածքին, Հայկական կազմակերպութեան մը անդամակցելու պարագային որո՞նք են հոգեբանական, քաղաքական, ընկերային եւ տնտեսական առաւելութիւնները եւ ինչպէ՞ս կարելի է բարելաւել զանոնք

Ընթացիկ առաւելութիւններ

Հոգեբանական

- ♦ Պատմական կազմակերպութեան մը պատկելու զգացումը
- ♦ Հասարակական օգտակար գործունէութիւն ունենալու գոհունակութիւնը
- ♦ Ընկերային զուարճալի զբօսանքի կարելիութիւններ
- ♦ Անձնական իրագործումի հոգեբանական բաւարարութիւնը

Քաղաքական

- ♦ Աննշան առաւելութիւն, հազուագիտ պարագաներուն

Ընկերային

- ♦ Ընկերային փոխ-յարաբերութիւններու օգտաշատ առիթներ
- ♦ Ընտանեկան նոր կապեր հաստատելու հետաքրքրական կարելիութիւններ
- ♦ Ընկերային ցուցանուլութեան յարմարաւետ պայմաններ

Տնտեսական

- ♦ Բարեկեցիկ ընտանիքներու պարագային բարեգործութեան գոհունակութիւնը ունենալու բազմազան առիթներ
- ♦ Կարիքաւոր ընտանիքներու պարագային կրթական թօշակներու գեղջեալ սակեր ունենալու կարելիութիւն

Կարելի բարելաւումներ

Հոգեբանական

- ♦ Ուղղահայեաց եւ հօրիգոնական փոխ-յարաբերութիւններ անդամակցութեան եւ ղեկավարութեան միջեւ, զանազան մակարդակներու վրայ
- ♦ Հաւաստի նպատակներու սահմանումը ու յստակ ժամանակամիջոցի մը ընթացքին զանոնք իրագործելու կերպին որդեգրումն ու գործադրութիւնը
- ♦ Յստակօրէն սահմանուած, գնահատանքի ու համարատուական դրութեան մը ծիրին մէջ հասարակական օգտաշատ իրագործումներ արձանագրելու հոգեկան գոհունակութիւնը

Քաղաքական

- ♦ Հաստատել տեղական քաղաքական շրջանակներու հետ, հետեւողական փոխ-յարաբերութիւններ, հիմնուած փոխադարձ շահերու հիման վրայ
- ♦ Հաստատել քաղաքական ճնշումի ցանցեր հետապնդելու ու պաշտպանելու համայնքային հարցեր ու իրաւունքներ
- ♦ Որպէս արդիւնք նոր արժէքներու ներթափանցումին, որոնք յարմարաւետ միջոցներ, բարելաւելու համար Հայոյ վատթարացող տիպարը Սփիւռքի տարածքին, մանաւանդ՝ գործարարական ոլորտներու մէջ
- ♦ Հաստատել ընկերային ծարայութեանց խորհրդատուական ցանցեր, օգտակար հանդիսանալու համայնքի անխտիր բոլոր անդամներուն, իրենց հասարարական կեանքի, օրինական ու տնտեսական մարզերուն դժուարութիւնները դիմագրաւելու

Ընկերային

- ♦ Կարելորութեան ընծայել ընկերային փոխ-յարաբերութիւններու երկարաշունջ ու հետեւողական աշխատանքին
- ♦ Օգտագործել բոլոր պատեհ առիթները հաստատելու ընտանեկան նոր կապեր
- ♦ Որոնել, հրաւիրել ու քաջալերել երիտասարդ տարրեր, որպէսզի ստանձնեն հասարարական պատասխանատուութիւններ, ստեղծագործական նոր աւիշի սկնկալութեամբ

Տնտեսական

- ♦ Հաստատել պատուոյ դրութիւն մը ուր զանազան հասարարական կառոյցներու անդամները, իրենց գործարարական ու շուկայական փոխ-յարաբերութիւններուն մէջ նախապատուութիւնը տան գործակցելու միւս անդամներուն հետ, արդար, փոխադարձաբար ընդունելի ու մրցակցական պայմաններու ծիրին մէջ
- ♦ Հաստատել բոլորին կողմէ ընդունելի ու գործադրելի համաձայնական գործարարական արժէքներու դրութիւն մը (business ethics by agreement) կանոնաւորելու համար ներքին ու արտաքին գործարարական փոխ-յարաբերութիւնները, յստակ պատժական ու զնահատական պայմաններով
- ♦ Ազգային տնտեսական դրութիւնը ենթարկել որակական փոփոխութեան, հմուտ ու արհեստավարժ տնտեսագէտներու տնօրինութեամբ: Վարչական ու կազմակերպչական բարեփոխումներէն առաջ, սահմանել ազգ-ազգային իշխանութիւններու տնտեսական

փոխ-յարաբերութիւններու նոր համակարգ հիմնուելով փոխադարձ շահաւէտութեան սկզբունքին վրայ եւ ոչ թէ արկայ դրութեամբ բարարարուիլ նուիրատուութիւններու ակնկալութեամբ: Ազգային տուրքի գաղափարը կարելի է վերածել մնայուն եկամտոյի աղբիւրի եթէ անոր փոխան տրուելիք հաւաքական ծառայութիւնները ըլլան աւելի էական ու գործնական:

ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԷՆ ՀԵՌԱՅՈՂ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՀԱՐՑ

Որպէս տարագիր Հայ անհատներ, լռելեայն ու երբեմն բարձրաձայն, հարց կու տանք մեր ինքնութեան պահպանումին էաբանական անհրաժեշտութեան մասին: Ինչո՞ւ, ինչպէ՞ս ու մինչեւ ե՞րբ: Մակայն կարելի՞ է սոսկական մարդ արարած ըլլալ առանց յաւելեալ հասարակական յատկանիշներով օժտուած իւրայատուկ ինքնութեան: Պիտի նախընտրելի՞նք տարբեր ինքնութիւններ ունենալ: Կարելի՞ է որակական բաղդատութիւններ կատարել զանազան ինքնութիւններու միջեւ ու ընտրել յարմարագոյնը: Որո՞նք են բաղդատութեան առ արկայական ու ենթակայական տարրերը: Որո՞նք են տարբեր ինքնութիւններու տաժած առ աւելութիւններն ու անպատեհութիւնները:

Տարիներ առաջ, աշակերտական հարցախոյզի մը ընթացքին, «եթէ Հայ չ'ըլլայիր ի՞նչ կ'ուզէիր ըլլալ» հարցումին, զանազան յարաջաղէմ ազգութիւններու կողքին, պատանի մը կը պատասխանէր. «կարմիր ծաղիկ»: Անյետեթ բանաստեղծական պատասխան մը՝ ինքնութեան տագնապին լուռ ցաւերը խորհրդանշող:

Մակայն, հակառակ համաշխարհայնացումի ու տեղական քաղաքացիական օրէնքներու ազդեցութեան, Սփիւռքի տարածքին, տարբեր ինքնութիւններու գոյակցութիւնը, մարդային իրաւանց ընդհանուր ծիրին մէջ, կը շարունակէ մնալ՝ ապրող իրողութիւն, իր բազմաթիւ տարագումներով: Ինքնութիւններու բազմազանութիւնը իրենց իւրայատուկ պատմական յիշողութիւններով ու մշակութային առանձնայատկութիւններով մարդակային ընդհանուր քաղաքակրթութեան անբաժանելի տարրերը կը կազմեն:

Երիտասարդ սերունդի անդամներէն, կարելոր հատուած մը, ընտանեկան ու այլ պատճառներով, Հայկական կազմակերպութիւններու գործունէութեան չեն մասնակցիր ու նոյնիսկ կը հեռանան Հայկական շրջանակներէն: Խոշոր բառերով քննադատութիւններ կատարելէ առաջ, նախ պէտք է հասկնալ անոնց մտայնութիւնը ու ազգային հարցերու հանդէպ ունեցած անտարբերութեան պատճառները: Ապա, դրական մօտեցումով, հարց տալ թէ ինչպէ՞ս կարելի է ներգրաւել զանոնք, որպէսզի իրենց աժխոյժ մասնակցութեամբ, օգտակար հանդիսանան ազգային հասարակական կեանքի բարելաւումի գործընթացին:

- ♦ Լրջութեամբ, հետազոտողի իրենց ապագայի մարդկային ակընկալութիւններով, երազներով ու մտահոգութիւններով: Հասկնալ անոնց մտայնութիւնը՝ դրական մօտեցումով: Ընտանեկան, բարեկամական ու ազգաբարեկային կապերու միջոցով զօրակցական ցանցեր կազմել:
- ♦ Պատանեկան ու Երիտասարդական կազմակերպեալ շարժումներու միջոցով, քաջալերել նոյնանման հետաքրքրութիւններ ունեցող տարրերու միջեւ բարեկամական կապերու ստեղծումը, ինչպէս նաեւ՝ խրախուսել զանոնք որպէսզի նախաձեռնութիւնը ստանձնեն, մշակելու ու գործադրելու զիրենք հետաքրքրող ծրագիրներ:
- ♦ Օգտագործել անոնց մասնագիտական հմտութիւնն ու երիտասարդական խանդը, ընդլայնելու համար ներքին ու արտաքին փոխ-յարաբերութիւններու ցանցը, տեղական ու միջազգային մակարդակներու վրայ: Ասպարեկային զօրակցական ցանցերու օգտագործումով, հասարակական բոլոր մարզերու մէջ, ձգտիլ ու հասնիլ պատասխանատու դիրքերու, «բարձրացիր, բարձրացուր» նշանաբանը գործադրելով:

Պատահական հետաքրքրությունները, ժամանակի ընթացքին կրնան զօրանալ, եթե մարդկային պահանջներուն ու ազգային ինքնութեան միջեւ ստեղծուի ներդաշնակութիւն, հակասութիւններու բնական հարթումով: Ու, ազգային ինքնութեան պահպանումը, իսկապէս ապահովել յաւելեալ գոյութենական առաւելութիւն ու հոգեկան գոհունակութիւն:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ՈՒ ՍՓՈՌՄ

Ինչէ՞ս կարելի է, Հայաստանի Հանրապետութեան ու Սփիւռքի ներկայ պայմաններուն մէջ, պահպանել, վերակենդանացնել, զարգացնել ու տարածել Հայկական մշակութային ժառանգը:

Գրականութեան, մամուլին, թատրոնին, երգին, պարին ու կերպարուեստին հանդէպ բացայայտուող անտարբերութեան արմատները պէտք է փնտրել աշխարհայնացումին ու տնտեսական տագնապին կողքին մեր ինքնութեան աղաւաղումին ու նոր սերունդը հետաքրքրող ստեղծագործական նոր շարժումներու բացակայութեան մէջ:

Պայման է ունկնդրել նոր սերունդին ու ստեղծել իր նախասիրութիւնները բարարող նոր երկարաշունջ շարժումներ ու արտայայտամիջոցներ եւ այդպէս կազմաւորել իրենց մէջ բարիին ու գեղեցիկին սէրը եւ ստեղծագործ աշխատանքի գնահատանքն ու կարողութիւնը:

Վերջին տարիներուն բոլոր մշակութային միութիւնները, դառն փորձառութիւնը ապրեցան տքնաջան աշխատանքէ ետք զառնուելու ժողովրդական անտարբերութեան փորձաքարին:

Հասարակական հիմնական արժէքներու ու նպատակներու յստակացումով կարելի մշակութային մարզը աշխուժացնել, Հայաստանի Հանրապետութեան ու Սփիւռքի զանազան կազմակերպութիւններու համակարգուած գործակցութեամբ եւ յարմարաւետ նոր ծրագրաւորումներով

Բազմատասնեակ լեզուներու իր տիրապետութեամբ, թարգմանչական աշխատանքով կարելի է ստեղծել նոր հորիզոններ ներգրաւելու համար Հայերէն լեզուն կորսնցնող սերունդներու հետաքրքրութիւնը, ինչպէս նաեւ՝ միջազգային հանրութիւնը:

Պատմութեան ոգին սոսկ մեր անցեալի քաղաքական դէմքերու եւ մարտական յաղթանակներու ու պարտութիւններուն ժամանակագրութիւնը չէ. այլ՝ մեր հաւաքական հպարտութիւններուն բիրեղացած արտացոլացումը. մեր արեւանգուած Արարատը իր տապանով, մեր հեթանոս արմատ բառերը, մեր առասպելները, մեր դիւցազներգութիւնը, մեր հնամեայ ու ժամանակակից ծուռ աշուղները, մեր կոթողներն ու տաճարները, մեր գորգերն ու մեր համբերութեան մետաղեայ մնացորդացը. ապա՝ մեր եկեղեցին իր հերոսապատումով, իր ճարտարապետութեան համաշխարհային վկայութեամբ, իր վաղնջական արարողութիւններուն առինքնող երգեցողութեան հեծիւնով, իր ձեռագիր մատենաններուն անհաւատալի թիւին վերապրումով:

Յետ 1991-ի Հայը, իր երրորդ սերունդով հասած է վտանգաւոր հանգրուանի մը: Մենք, որպէս ամբողջական քաղաքացիներ մեր ապրած երկիրներուն, բնականաբար ազդուելով մեր շրջապատի դրական ու ժխտական բազմադրիւր ազդակներէն, պաշտօնական եւ ընկերային կաշկանդումներէն, ողորուելով նոր սովորութիւններով, Հայութիւնը տակաւին կրնանք նկատել, Ազնաւորի գեղեցիկ մէկ խօսքով, մեր կրօնը: Սակայն՝ առանց ազգային հաւատամքի:

ԳԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

Եթէ փորձենք առարկայական ձեւով քննարկել Սփիւռքի հասարակական կազմակերպութիւններու կառոյցն ու արդիւնաւետութիւնը, մօտաւոր զաղափար մը կրնանք կազմել, համայնքային կարելոր որոշումներ առնելու իրաւասութիւնը ունեցող անձերու մտածողութեան ու կարողութիւններուն մասին: Որպէս կամաւոր աշխատողներ, կը փորձեն աւանդական, սովորութեան վերածուած աշխատաձեւերով շարունակել իրենց նախորդներուն կատարածը, առանց նկատի առնելու անոնց նպատակայարմարութիւնը, փոփոխուող

պայմաններում: Մակայն՝ զնահատելով հանդերձ անոնց նուիրումն ու տրամադրած ժամանակը հասարարական կազմակերպութիւններէն ներս, կարելի է ափսոսալ բացակայութիւնը բոլորովին տարբեր կարիքներ բարարարող անձերու: Անձեր, որոնք ունենան հաւատք, տեսլական ու հետեւողական նպատակասլաց աշխատանքի կարողութիւն, օժտուած՝ բարոյական արժանիքներով ու մասնագիտական փորձառութիւններով: Բայց, որոնք են այդ անձերը:

Հաւանաբար, «ղեկավար» բառը, բաղդատաբար ամենէն աւելի յարմար ձեւով կ'արտացոլացնէ ազգային պատմական յիշողութեան դիմագրաւած դժուարութիւններուն բնոյթը, նոյնիսկ եթէ ծով ունենալու բախտը եղած է հազուագիտ: Ղեկավարի մտապատկերը, հաւասարապէս ուժգին է ալեկոծ ու խաղաղ ժամանակամիջոցներուն ապահով ուղղութիւններ ճշդելով, հաւաքական նպատակներու հասնելու: Երկու տարբեր հոմանիշ բառեր, «առաջնորդ» եւ «պետ», կը մնան յաւելեալ կարելիութիւններ, ըստ պատասխանատուութեան բնոյթին ու մակարդակին: Իսկ հերոսը կը մնայ հազուագիտ, մարտիրոսութեան բազմազանութեան մէջ:

Ղեկավարի մը անէնէն նախնական եւ միաժամանակ էական դերը կը կայանայ իր հետեւորդներուն ուղղութիւն ցոյց տալու կարողութեան մէջ: Ուղղութիւն ցոյց տալու համար ղեկավարը պէտք է ունենայ տեսլական ու հասանելի հեռակայ նպատակներ: Այդ նպատակները պէտք է ըլլան ընդհանրական, հաւաստի, համոզիչ ու գործնական: Հասանելի, ծրագրեալ նպատակակէտերու իրագործումը կը կատարուի զօրաւոր կամքի վրայ հիմնուած հետեւողական աշխատանքով:

Հաւաքականութեան մը աշխատանքը արդիւնաւետ կ'ըլլայ երբ բոլորը նոյն ուղղութեամբ կ'աշխատին: Ծրագրի մը յաջող գործադրութեան համար էական է ունենալ ղեկավար մը որ միաժամանակ ուղղութիւն տայ ու հսկէ կատարուող աշխատանքին, վստահ ըլլալու համար անոր յաջող կատարման, երբեմն միջամտելով՝ կառուցողական, քննադատական դիտողութիւններով կամ քաջալերական խօսքերով:

Ղեկավարը, որպէս օրինակելի անձ, յստակ գաղափար մը պէտք է ունենայ իրագործելի նպատակակէտերուն տարողութեան ու կարեւորութեան, ինչպէս նաեւ՝ զանոնք իրագործելու միջոցներուն եւ տրամադրելի մարդուժի ատակութեան ու գիտակցութեան:

Ղեկավարը, ստեղծագործական մտածողութեամբ եւ ներդաշնակ ծրագրաւորումով պէտք է կարենայ յուսադրել, խանդավարել ու ոգեւորել իր հետեւորդները՝ վերածուելով ներշնչող օրինակի: Պէտք է կարենայ գերազանցել որպէսզի իր հասարարական իրագործումները ըլլան հիացմունքի առարկայ իրենց օգտաշատութեամբ:

Ղեկավարը իր համապարփակ յստակատեսութեան համոզումով, պէտք է արիութիւնը ունենայ ամբոյսին մէջ առանցիկ կանգնելու ու համոզելու իր հետեւորդները տարբեր ուղղութեամբ ընթանալու երբ անոնք անել ճամբու վրայ կը գտնուին:

Ղեկավարը կը խրախուսէ, կը ներշնչէ իր հետեւորդները որոնք իրենց կարգին կը յարգեն ու զօրավիզ կը կանգնին իրեն: Ղեկավարը ամէն ձեւով կ'օգնէ իր հետեւորդներուն, կը դիրացնէ անոնց աշխատանքը, կը դրդէ ու կը քաջալերէ անոնց նախաձեռնութեան ոգին, որպէսզի տան իրենց առաւելագոյնը:

Ղեկավարը, իր հետեւորդներուն առանձնայատկութիւնները հասկնալով, յարգալիք վերաբերմունքով կը փորձէ բարելաւել, քաջալերելով անոնց անհատական զարգացումը: Որպէս հետաւանք կը ստեղծուի փոխադարձ յարգանքի, վստահութեան ու զօրակցութեան մթնոլորտ:

Ղեկավարը կը գիտակցի իր կազմակերպութեան կարողականութեան, տկարութեան ու դիմագրաւելիք արտաքին վտանգներուն ու օգտագործելի պատեհ առիթներուն ու ըստ այնմ՝ կը տնօրինէ ներկայի պահանջներն ու սպագայի ծրագրումը՝ յարմարելով արտաքին ու ներքին փոփոխուող պայմաններուն:

Ղեկավարը, կատարուած հաւաքական աշխատանքի մը արժէտորումով կրնայ մատնանշել թերութիւններն ու ի հարկին առաջարկել տարբեր մօտեցումներ, բարելաւելու համար արդիւնքը ու գործադրել զայն համոզումով, հակառակ թերահաւատներու վերապահութեան:

Ղեկավարը, իր հասարակական առաքելութեան խոր հաւատքով պէտք է ըլլայ համարատու, շահելու համար իր հետեւորդներուն վստահութիւնը: Համարատու ըլլալ կը նշանակէ կատարուած սխալները ընդունելով աւելի բժախնդիր ձեւով ծրագրաւորել իրեն վստահուած աշխատանքները ու հետեւողական կեդրոնացումով հասնիլ օգտաշատ արդիւնքներու:

ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Մեր համայնքային միասնականութիւնը կը դրսեւորուի հազուագիտ առիթներով ու մտածողութեան որոշ մակարդակի մը վրայ: Ազգային աղէտներ, բնագոյաբար ստեղծած են զգացական միասնականութիւն ու ժամանակաւոր գործնական զօրակցութիւն:

Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ կատարուած աշխատանքները, ինչպէս նաեւ Արցախի ազատագրական ու քաղաքական պաշտպանութեան հիմնահարցերու հետապնդումը, կը շարունակուին համախոհական մտասէւեռումներով:

Սակայն, առկա կը մնան բազմաթիւ այլ հարցեր որոնք կը կարօտին համահայկական միասնական որոշումներու ու ամոնց անյապաղ գործադրութեան: Հետեւեալ ցանկը մօտաւոր գաղափար մը կրնայ տալ կատարուելիք աշխատանքին տարողութեան ու արդիւնքին կարեւորութեան մասին:

- ♦ Հայաստան-Սփիւռք փոխ-յարաբերութիւններու ծրագրաւորեալ ուժականացումը, համահայկական նպատակներու շուրջ, կառուցային համակարգի մը միջոցով զօրակոչի ենթարկելով բազմակողմանի բոլոր կարելիութիւնները:
- ♦ Հայկական Առաքելական Եկեղեցիի զոյգ աթոռներու միասնական ու համաձայնական առաքելութեան դաշտերու յստակացումով ու գործակցութեամբ դիմագրաւելու, կրօնական, բարոյական ու ընկերային բազմաբնոյթ մարտահրաւերներ:
- ♦ Քաղաքական, տնտեսական, մշակութային ու կրթական մարզերու մէջ, Հայաստանի Հանրապետութեան ու Սփիւռքի հասարակական կազմակերպութիւններու միջեւ ստեղծելու մնայուն խորհրդակցական կապեր, բարելաւելու համար համագործակցութեան առկայ թերի դրութիւնը:
- ♦ Փոխադարձ վստահութեան ու յարգանքի վրայ հիմնուած, ազգային ամբողջական ներուժի լարումով, ամբողջացնելու զիրար, որպէս մէկ ազգ:
- ♦ Առարկայական քննարկումներով ու շինիչ քննադատութիւններով վերծանել մեր ազգային կեանքի խոցելի կողմերը եւ անմիջական սրբագրումներ կատարել:
- ♦ Միացեալ ուղղագրութեան հարցը նոյնքան կենսական է որքան Արցախի քաղաքական պաշտպանութիւնը: Լեզուն, ազգի մը անէնէն կարեւոր միաւորող տարրերէն մէկը ըլլալով, առնուազն իր ուղղագրութեամբ պէտք է միօրինակ ըլլայ, գործնական նկատումներով: Մանաւանդ՝ համացանցի ակնթարթային գրաւոր փոխ-յարաբերութիւններու ընձեռած դիրութիւնները հեզասահ ու ամբողջական ձեւով օգտագործելու, էական ու անյետաձգելի կարելիութիւններ ստեղծելու համար:

Գաղափարախօսութիւններու ու գաղափարներու տարբերութիւնը արգելք պէտք չէ ըլլալ երկխօսութեան միջոցով հասնելու հասարակ յայտարարներու: Գործակցութիւնը փոխադարձ հասկացողութենէն փխտող յարգանքի եւ սիրոյ վրայ կը հիմնուի: Ընդունելով ուրիշին արժանիքները, մենք չենք նուաստանար: Ինքնաքննադատութեամբ կարելի է հասնիլ

ինքնաճանաչողութեան տարրեր մակարդակի որպէս հաւելեալ միջոց ճանչնալու ուրիշը ու գնահատելու զայն իր իսկութեան մէջ:

Կարելի չէ միասնականութիւնը ինքնամպատակ նախապայման մը նկատել, հասարակական յոջողութիւններ արձանագրելու համար: Միաժամանակ՝ մեր հաւաքական ձոխողութիւնները պէտք չէ վերագրել միասնականութեան բացակայութեան :

Կարգ մը պարագաներուն, համաձայնական անմիասնականութիւնը, կրնայ աւելի օգտակար ըլլալ որքան՝ միասնականութիւնը: Պարագաներու բնոյթին ու կարելոյն վերջին մակարդակին համաձայն կարելի է հետեւանքներու արժէտը կատարել ու հասնիլ համաձայնական անմիասնականութեան, հաւաքական դրական որոշումի ուղղեցոյց ունենալով, արդիւնքին յարմարաւետութիւնն ու համայնական շահը կամ վնասը:

Չ. ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ինչպէ՞ս կարելի է պահպանել Սփիւռքի Հայկական գաղութներու մշակութային ինքնութիւնը, բարելաւել անոնց տնտեսական ու ընկերային համակարգը եւ վերակազմաւորել հասարակական կեանքի ոլորտները, համերաշխ գործակցութեան ու միութեան գաղափարը վերածելով անհատական ու հաւաքական յառաջդիմութեան հիմնաքարի:

Ստորեւ յիշուած ասանդական միջոցները, անցեալին գործածուած են որպէս կարելոյն եւ անհրաժեշտ տարրեր, հայակերտումի ու հայապահպանման համար:

Ա. Մշակութային ժառանգ.

Որպէս հպարտութեան աղբիւր՝ անցեալի իրագործումներով:

Բ. Լեզու

Որպէս հաղորդակցութեան միջոց եւ գործնական շաղկապ:

Գ. Եկեղեցի

Որպէս համաշխարհային կրօնական դրութեան մէջ եզական անհատականութիւն եւ մշտատեւ պահապանը բարոյական արժէքներու:

Դ. Ընտանիք

Որպէս պատասպարան հաւաքական յիշողութեան ու ասանդութիւններու:

Ե. Հայեցի դաստիարակութիւն

Որպէս կերտիչը ազգային ոգիի եւ անհատական նկարագիրի:

Չ. Քաղաքական կազմակերպութիւններ

Որպէս հայթայթիչը ազգային ղեկավարութեան եւ հաւաքական իրաւունքներու պաշտպանը:

Է. Մշակութային միութիւններ եւ ակումբներ

Որպէս հոգեկան ու մտային կարիքներ եւ իղձեր բաւարարող կեդրոններ:

2005 թուականին, վերոյիշեալ տարրերը տակաւին կը պահեն իրենց կարելոյնութիւնը: Սակայն, անոնց կողքին, նոր եւ գործնապաշտ միջոցներ պէտք է այլապէս բաւարարեն գոյութեան պէտքեր ու իղձեր, զօրացնելով կապը անհատներու միջեւ որոնք հպարտ ըլլան իրենց պատկանելիութեամբ, եւ որոնց համար Հայ ըլլալը ունենայ նաեւ գոյութեան արտելութիւններ:

Անհրաժեշտ է վերլուծել մեր հաւաքական յիշողութիւնն ու արժէքները աղաւաղող ուժերուն բնոյթը: Նոյնիսկ մեզմէ շատ աւելի հզօր պետութիւններ իրագեկ են համաշխարհային տեղեկատուական ցանցերու կողմէ սփռուած տեղեկութիւններու վտանգին: Անոնք մեզի կը

փոխանցումն որպես ճշմարտություններ, սակայն հակառակ իրենց ահաուր քանակին, չեն վերածուիր մշտական գիտելիքներու եւ իմաստութեան:

Հետեւելով ու հսկելով միջավայրի յաւէտ փոփոխուող պայմաններուն եւ քննարկելով անոնց բացասական ու դրական ազդեցութիւնները, անհրաժեշտ է պատրաստել ազգային յեղաշրջուող ուղղեցոյցներ, օգտագործելու համար աւանդական եւ նորարական բազմազան միջոցներ, պահպանելու համար մեր իւրայատուկ մշակութային ինքնութիւնը:

Առաջադրանքներ

ա. Մշակութային ժառանգ

Որպէս բազմազան երկիրներու քաղաքացիներ, Հայերը ունին օրինական եւ բարոյական տարբեր պարտաւորութիւններ որոնք պէտք է յարգուին ամբողջութեամբ: Սակայն իրենց մարդկային իրաւունքն է ունենալ իւրայատուկ մտածողութիւն ու արժեհամակարգ, մինչեւ այն ատեն որ անոնք չեն հակասեր տիեզերական բարոյական արժէքներուն եւ որպէս քաղաքացիներ իրենց բնական երկիրներու օրէնքներուն : Ընդհանրապէս, մշակութային տարբերութիւնները եղած են փոխադարձ հարստացումի, գերազանցելու մղիչ ոյժ:

Նոր աշխատածներով ու միջոցներով, զայն տարածել այն երկիրներու մէջ ուր Հայ համայնքներ արդէն իսկ ստեղծած են հաւաքական բարի կամեցողութիւն Հայ ժողովուրդի հանդէպ: Մշակութային արժէքներու երկկողմանի յարգանքն ու զնահատանքը փոխադարձ հոգեկան հարստացումի աղբիւր է:

բ. Լեզու

Հայերէն լեզուն, ինչպէս այլ լեզուներ, առաւելութիւն են որեւէ անձի մը համար: Որպէս ապրող լեզու, փոփոխութեան ենթակայ է նոր եզրաբանութիւններու ու տարբեր լեզուներու ազդեցութեան տակ: Եթէ, բացառիկ պայմաններու բերումով, անխուսափելի ըլլայ կորուստը Հայերէն լեզուի գործածութեան, մշակութային ինքնութեան պահպանումը կարելի է ապահովել տարբեր ազդակներով:

գ. Եկեղեցի

Հայ Առաքելական Եկեղեցին, եւ ապա Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական Եկեղեցիները, դարերու ընթացքին, եղած են կերտիչներն ու պահապանները Հայկական մշակոյթին, Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին: Քաղաքական դատարկութեան երկար շրջաններուն, եկեղեցին կառավարած է ընկերային կառոյցը եւ հսկած բարոյական արժէքներու գործադրութեան: Որոշ շրջաններ, զանազան պատճառներով, Եկեղեցի-Ժողովուրդ կապը եղած է թոյլ, հաղորդութիւնը հազուադէպ ու խորհրդանշական միայն: Անհրաժեշտ է որ Եկեղեցին, ինչպէս նաեւ այլ ազգային կառոյցներ, վերադառնան ժողովուրդին, խօսին անոր լեզուն եւ հասկնան անոր կարիքները: Իրապաշտ պիտի չ'ըլլար ակնկալել ժողովուրդէն որ Եկեղեցի յաճախ որպէս պարտականութիւն եւ սովորութիւն միայն: Սփիւռքի տարածքին, Եկեղեցին պէտք է ըլլայ հոգատար եւ գործունեայ առաջնորդը, երկարաշունջ տեսլականով սահմանելով բարոյական եւ ազգային արժէքներ ու հսկելով անոնց գործադրութեան, հաշտեցնելով տարբեր հատուածներու ակնկալութիւնները, ի շահ Սփիւռքի Հայ համայնքներուն ու Հայաստանի Հանրապետութեան:

դ- Ընտանիք

Արտաքին ազդակներ, բնականօրէն այլակերպած են Հայ ընտանիքին դիմագիծը: Հակառակ խիստ հակադրութեան եւ յայտարարուած սուր պայքարի, յեղափոխուող ընկերային պայմաններու բերումով, խառն ամուսնութիւններու թիւը կ'աճի շարունակաբար: Յաճախ, ամուսնացեալ զոյքերու զոհաբերութեան աւանդական ոգին տեղի կու տայ աններողութեան առջեւ: Նիւթական մտահոգութիւններ կը տեղափոխեն ոգեկան արժէքները եւ գործնական նկատառումներ կը նօսրացնեն բարոյական սկզբունքները: Միայն կազմակերպուած եւ իսկական առաջնորդութեամբ կարելի է կասեցնել շարժումը, հակաշրջութիւնը ըլլալով գրեթէ անկարելի:

ե. Հայեցի դաստիարակութիւն

Ազգային հաւատամքի մը եւ ազգային նպատակներու հասնելու ուղղեցոյցի մը չգոյութեան, Հայ դպրոցը յեղաշրջուած է յարմարելով յարափոփոխ կեանքի պահանջներուն ու պայմաններուն: Հայերէն լեզուն սորվելու տրամաբանական, գործնապաշտ եւ համոզիչ պատճառարկումի մը բացակայութեան, առաջին սերունդի նուիրեալ դաստիարակները չունեցան բարար յաջողութիւն: Հնաբոյր դասագիրքեր, չփոխանակուեցան մանկավարժական արդիական տպագրութիւններով, որոնք ըլլային բաղդատելի այլ լեզուներու ու գիտական ճիւղերու դասագիրքերուն: Նկարագիրի կազմաւորումը դպրոցներու մէջ եղած պատահական, անկատար եւ աննպատակ: Բարձրագոյն ուսումի ու ասպարէզի ընտրութիւնը կազմակերպուած չեն ազգային պահանջներու նկատումներով: Վերջին շրջանին, Լիբանանի մէջ, պետական եւ համալսարաններու մուտքի քննութիւններուն մէջ յաջողելու մտահոգութիւնը եղած է առաջնահերթ, նուազեցնելով կարեւորութիւնը հայեցի դաստիարակութեան, զայն վերածելով, կարգ մը ծնողներու եւ աշակերտներու միտքին մէջ, զգացական բայց անպէտ գիտելիքի: Ազգային նպատակներու յստակ սահմանումով կարելի է ստեղծել նոր քափ ու նոր միջոցներով կրկին արժեւորել Հայեցի Դաստիարակութեան կարեւորութիւնը:

զ. Կուսակցութիւններ

Որպէս քաղաքական կազմակերպութիւններ, անջատօրէն, անոնք ունեցած են իրենց դրական ազդեցութիւնը, ամէն մէկը իր շրջանակին մէջ, պատրաստելով կարգապահ եւ գործունեայ ազգային գործիչներ ու ղեկավարներ: Սակայն, գաղափարական վեճեր ու անձնական փառասիրութիւններ պատճառ եղած են պառակտումի, կրքոտ թշնամութեամբ: Միայն բոլորին կողմէ ընդունուած հաւատամք մը եւ ազգային գաղափարախօսութեան մը վրայ հիմնուած ազգային նպատակներ կրնան իրենց շուրջ համախմբել կարելի բոլոր ներուժը եւ կանոնաւորել մեր ազգային գործունէութեան ընթացքը: Միութիւնը, հաւատամքին ու նպատակներուն շուրջ, նախապայմանն է վերածնունդի: Գործելաձեւերու բազմազանութիւնը, նպատակներու միութեան ծիրին մէջ, ընդունելի է եւ նաեւ օգտակար անհրաժեշտութիւն:

է. Մշակութային միութիւններ

Մասայական տեսա-լսողական լրատուական միջոցները կ'ազդեն մարդոց ճաշակին ու հետաքրքրութիւններուն վրայ: Համաշխարհային արժէքները կը փորձեն խեղդել շրջանային արժէքները: Միօրինակութիւնը, մասսայական արտադրութեան ձեւով, կը ձգտի փոխարինել մասնաւորն ու եզակակը: Գործնական եւ նիւթապաշտական հետաքրքրութիւններ կը վանեն բանաստեղծական գործի մը ընթերցումին առթած հաճոյքը, արուեստի գործի մը ներկայացումէն բխող հաւաքական յոյզերը, հաւաքական ստեղծագործութեան հաղորդակցութիւնը: Բոլորս, ամենօրեայ փորձառութիւնը կ'ապրինք հեռատեսիլի անպարունակ սփռումներուն ճապաղութիւնը: Մարդկային կենդանի ներկայութիւնը ու յարակցութիւնը կը մնան անհրաժեշտութիւն: Նոյն հետաքրքրութիւնները ունեցող անհատներու համախմբումով կարելի է աշխուժացնել գոյութիւն ունեցող մշակութային միութիւններու գործունէութիւնը, պատճառարկել մասնակցողները վայելելու նոյն նախասիրութիւնները ունեցող ուրիշին ներկայութիւնը, եւ քաջալերել զանոնք արտայայտուելու եւ ակնկալելու ուրիշին գնահատական խօսքը: Որակը ըլլալով յարաբերական, կարելի է կեդրոնանալ խորքին վաւերականութեան վրայ եւ ձեւին՝ անկեղծութեան:

Սփիւռքի տարածքին, հայապահպանման աւանդական միջոցներու - լեզու, եկեղեցի, ընտանիք, դպրոց, քաղաքական կազմակերպութիւններ, մշակութային միութիւններ եւ ակումբներ - կողքին, նոր եւ գործնապաշտ միջոցներ պէտք է այլապէս բարարեն գոյութեանական պէտքեր ու իղձեր, զօրացնելով կապը անհատներու միջեւ որոնք հպարտ ըլլան իրենց պատկանելիութեամբ, եւ որոնք համար Հայ ըլլալը ունենայ նաեւ գոյութեանական առաւելութիւններ:

Այդ մէկը կարելի է իրագործել երբ ներքին նպատակասլաց զօրակցութեամբ կը կարողանանք օգտագործել մեր անհատական, ընկերային, տնտեսական ու քաղաքական բարեկամութիւններն ու փոխ-շահաւէտութեան վրայ հիմնուած միջազգային կապերը,

կազմակերպուած լուսինի միջոցներով, բարձրագոյն մակարդակներու վրայ ու շրջանակներու մէջ:

Տարիներ առաջ, հաճոյքը ունեցայ ծանօթանալու, Գանատահայ գործարար անձնաւորութեան մը: Քանի մը օրերու վրայ երկարող մեր զրոյցներէն մէկուն, իր անձնական կեանքէն առնուած շատ յատկանշական ու խորհրդանշական դրուագ մը պատմեց:

«Տասնեակ մը տարիներ, շատ յաջող վաճառականական փոխ-յարաբերութիւն մը մշակելէ ետք ոչ-Հայ գործընկերոջ մը հետ, իրեն առաջարկեցի աւելի զարգացնել ու ընլայնել մեր գործարարութեան դաշտը: Վայրկեան մը ստածելէ ետք, զիս իր տունը հրաւիրեց, տիկնոջս ընկերակցութեամբ, աւելցնելով որ չէք պուրս հետս ըլլայ»:

«Որոշուած օրը, ընտանեկան այցելութեան ընթացքին ըսաւ թէ ինք որպէս նախագահը մարդասիրական կազմակերպութեան մը, մեզ կը հրաւիրէր ներկայ գտնուելու ճաշկերոյթի մը, որուն ընթացքին փափաքելի պիտի ըլլար որ յիսուն հազար տոլարի նուիրատուութիւն մը կատարէինք, այսօրուրնէ: Ընդունելով իր հրաւերը, ակընկալուած չէք ստորագրելէ ետք բաժնուեցանք իրարմէ»:

«Անիս մը ետք, ճաշկերոյթի ընթացքին, պատուոյ սեղանին շուրջ նստած, իմ գործընկեր-նախագահի բացման խօսքին մէջ զարմանքով պիտի լսէի որ մենք, որպէս միակ ոչ-Հրեայ հրաւիրեալները սոյն ճաշկերոյթին, սիրայօժար կերպով իրենց կազմակերպութեան կը նուիրէինք յիսուն հազար տոլար...ամէն տարի, տասը տարիներ շարունակաբար»:

«Բարեկանս, վերջացնելէ ետք իր խօսքը, կը նստեր քովս: Մտազբաղ ու անհամբեր կը կատարէի ճշդում մը, ըսելով որ ես միայն մէկ անգամուան համար կատարած էի այդ նուիրատուութիւնը: Գործընկերս, ժպտալով կ'ըսէր թէ հիմա յարմար տեղը չէ խօսելու ու զիս իր գրասենեակը կը հրաւիրէր յաջորդ երկուշաբթի օր»:

«Երկուշաբթի, ըստ ժամադրութեան, կը ներկայանայի իր գրասենեակը: Կարճ խօսակցութենէ մը ետք, ինձի կ'առաջարկէր, միասնաբար ստորագրել նոր համաձայնագիր մը, տասը տարիներու տևողութեամբ: Ըստ այդ նոր համաձայնագրին, ես առիթը պիտի ունենայի բազմապատկելու իմ տարեկան եկամուտս ու տասը տարուան նուիրատուութիւնս պիտի ըլլար սոսկ ընդհանուր շահիս հարիւրէն հինգը միայն»:

Ինչպէս կը տեսնուի վերոյիշեալ իրական պատմութենէն, կատարուածը փոխ-շահաւէտութեան վրայ հիմնուած զօրակցութիւն մը էր եւ ոչ թէ սիրայօժար կամ ստիպողական նուիրատուութիւն մը:

Սփիւռքի ներկայիս հաւաքական ամբողջական կարելիութիւններուն զիտակցութեան արդիւնաւորման մեկնակէտը սփիւռքի մարդուծին ցանկագրութիւնն է: Յաւեա փոքրացող երկրագունդին եւ տեղեկութիւններու փոխանակման ակնթարթային միջոցներուն արագ տարածումով, քաղաքակրթութիւններու ձուլումը եւ ազգային-անհատական ինքնութիւններու պահպանման պայքարը կը ստանայ տարերային բնոյթ: Նոր համամարդկային արժէքներ իրենց հրապարակման միջոցներուն ուժգնութեամբ մոռացութեան կը դատապարտեն փոքրամասնական ինքնութիւններու իրայատուկ արժէքները: Սփիւռքի մարդուծի մանրամասն ցանկագրութիւնը կարելի է կատարել առանձին առանձին տարբեր երկիրներու մէջ գործող եւ ստեղծուելիք ազգային տարբեր տեղեկատուական կեդրոններու կողմէ եւ ապա՝ զանոնք փոխանակել համակարգիչներու միջոցով: Մարդուծի ցանկագրութիւնը ինքնանպատակ գործունէութիւն մը ըլլալէ աւելի միջոց մըն է անոնց կարելիութիւններուն օգտագործման գործնական ծրագրումին: Ընդհանրապէս, համաշխարհային մամուլին մէջ տնտեսական, քաղաքական, ստեղծագործական մարզերու մէջ ասուպանման գերազանցող եան-երը կրնան վերածուիլ ազգային օգտագործելի զօրութեանականութեան, եթէ մնայուն կառոյցներ փութան անոնց ծանօթանալու եւ առաջարկելու յարմար ու արժանի հասարակական դերակատարութիւն:

Հետեւեալ լրացուցիչ միջոցները պէտք է կազմակերպուին համազգային մակարդակով, ստեղծելու համար համերաշխութեան ու համագործակցութեան նոր թափ մը, անկախ կրօնական, քաղաքական ու հատուածական պատկանելիութեններէ:

♦ Ասպարեզային ընկերակցություններ, համագործակցությունը վերածելու ամենօրեայ հասարակաց կենսունակութեան: Լիբանանի մէջ, վերջին տասնամեակին, զանազան այդպիսի օրինական կազմակերպություններ, ունեցան եւ տակաւին կրնան ունենալ իրենց օգտաշատ ներկայութիւնը, եթէ ներմուծուին կազմակերպական բարեփոխություններ: Հայ Բժիշկներու Միութիւնը, Հայճարը, Լիբանանահայ Գործարարներու Միութիւնը, Հայ Ոսկերիչներու Միութիւնը եւ այլ իրենց ասպարեզային կարեւորութեան կողքին ունին յաւելեալ առաւելութիւն մը, իրենց ոչ-հատուածական անդամակցութեամբ:

♦ Քաջալերել եւ կազմակերպել նոյն հետաքրքրությունները ունեցող տարբեր սերունդներ ներկայացնող անհատներու հանդիպումներ կամ ընկերակցություններ, նպատակակէտ ունենալով փորձառութիւններու փոխանցումը ու փոխադարձ զարգացումը եւ որպէս միջոց հաւաքական գիտատանքի ու խրախուսանքի: Լիբանանահայ Արուեստագէտներու Համախմբումի Monday Forum-ը, Garden Tower պանդոկի սրահներէն մէկուն մէջ, տարիներէ ի վեր, հետաքրքրական ու յաջող փորձ մըն է հետեւողական մշակութային շարժում մը ստեղծելու, առանց՝ աստեղծապետի, վարչական կազմի եւ պիտճէի:

♦ Ցուցակագրել Հայկական մարդուծին ամբողջական կարելիութիւնները, արժեւորել հաւաքական գիտելիքներու դաշտը եւ որոնել յարմարաւէտ միջոցներ որպէսզի անոնց օգտագործումը ըլլայ ի նպաստ բոլորին ու ամէն մէկուն: Մարդուծը իր ներկայ անկազմակերպ դրութեամբ կը մնայ անորոշ, անհասանելի ու ասպարդիւն:

♦ Հիմնադրամներու միջոցով հաստատել կազմակերպչական նոր դրութիւն մը ուր կրթաթոշակներու կամ ասպարեզային յատկացումները ըլլան աւելի արդիւնաւէտ եւ այսօրուան ստացողները վերածուին վաղուան կամաւոր տուողներուն, որպէս անվերջ շղթայ իրարօգնութեան:

♦ Հիմնել համացանցային նախակրթական ու բարձրագոյն ուսման ծրագիրներ, բաւարարելու համար հայեցի դաստիարակութեան առնուազն նախնական պահանջները, մանաւանդ՝ այն վայրերուն մէջ, ուր գործնականապէս անկարելի է ունենալ կրթական մնայուն հաստատութիւններ:

♦ Տարբեր երկիրներու մէջ հիմնել կամ զօրացնել գոյութիւն ունեցող հետազօտական կեդրոններ, որպէս միջոց քաղաքական ճնշումի ու մշակութային քարոզչութեան:

♦ Հաստատել Հայկական տնտեսական եւ ընկերային ցանց մը, փոխադարձ շահաւէտութեան վրայ հիմնուած, գործօն բոլոր տարրերու գործնապաշտ փոխ յարաբերությունները վերածելու համագործակցական ազգային կառոյցի մը:

Արդիւնաւէտ կազմակերպչական միջոցներով եւ յարատեւ դրական հաղորդակցութեամբ, ծրագրել եւ իրականացնել լայնածիր քաղաքական, ընկերային, տնտեսական, գիտարուեստական եւ մշակութային ձեռնարկութիւններ, օգտագործելով հնարաւոր բոլոր մարդկային ոյժը, գիտելիքները եւ ֆինանսական կարելիութիւնները Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւոքի, նպատակադրելով Հայ Ժողովուրդի համաշխարհային յառաջդիմութիւնը:

Հետազօտական հաստատութիւններու միջոցով, հաւաքել հիմնական տուեալներ, տեղեկութիւններ, օգտագործել Հայերու մտային ոյժը եւ տնտեսական հարստութիւնը, որպէս առաջին քայլ, Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւոքի միջեւ ստեղծուելիք բազմակողմանի եւ բազմամակարդակ համագործակցութիւն մը, ի շահ բոլորին ու Հայաստանի Հանրապետութեան բարգաւաճումին:

Է. ԿԱԶՄԱԿԵՐՊՈԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌ ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Հայաստան-Սփիոք առաջին խորհրդածողովի կայացումէն վերջ, վեց երկար տարիներու ժամանակաշրջանը եղաւ ամուլ՝ համազգային հիմնահարցերու ապագայապաշտ ծրագրման ուղղութեամբ: Խորհրդածողովի առիթով ստեղծուած խանդավարութիւնը ժամանակի ընթացքին խամրեցաւ, բացակայութեանը մասնագիտական աշխատախումբերու, որոնք խորհրդածողովի արարտին կազմաւորուելով կրնային իրենց արժէքաւոր ստեղծագործական ու կազմակերպչական ներդրումը ունենալ, իրագործելու համար համազգային զարթօնք մը:

Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտութիւնը, հաւասարակշռուած դիրքորոշումներով կը շարունակէ յաջողութեամբ թիավարել միջազգային քաղաքական նոր բեւերացումներով յղի ալեկոծումներուն մէջ ու հակառակ յաճախակի սաստկացող արտաքին ճնշումներուն, կը յաջողի պահպանել Արցախի քաղաքական հարցին լուծման շրջանային ու միջազգային հաւասարակշռութիւնը:

Մինչ՝ Սփիոքի գաղութները իրենց բազմազան գոյութեանական հարցերով ու ազգային մշակութային ինքնութեան աղաւաղումով կը գտնուին անկիւնադարձային հանգրուանի մը արարտին, երբ էական է ունենալ ազգային ղեկավարութիւն մը որ նոր պայմաններուն յարմարող տեսլականով, որդեգրէ ազգային նոր արեւելում ու յարմարաւէտ ծրագիրներ, կասեցնելու համար տարածուող անտարբերութիւնն ու յուսահատութենէն բխող ակամայ հայապարպումը, նպատակադրելով ազգային զարթօնքի մը իրականացումը:

Հայաստան Սփիոք փոխ-յարաբերութիւններու ընդհանուր ծիրին ու մասնաւորապէս, տնտեսական մարզին մէջ գոյութիւն ունեցող փոխադարձ ակնկալութիւններու եւ կարելիութիւններու իրապաշտ քննարկումը, իրենց ենթակայական ու առարկայական ծաւալներով, էական նախապայման մըն է մեկնաբանելու համար փոխադարձ անհասկացողութիւններէն բխող յուսախաբութիւնները:

Սփիոքը կը շարունակէ հաւատալ Մայր Հայրենիքի ապահովութեան ու բարօրութեան կենսական կարեւորութեան, իր ցեղային ու պատմական ակունքներէն փխտող հաւատարմութեամբ, յուսալով որ Հայրենիքը կրնայ բարարարել իր հայրենասիրական ակնկալութիւնները: Հայրենիքը՝ որպէս պետութիւն ու ժողովուրդ, կը հաւատայ Հօր Սփիոքի բարոյական պարտաւորութիւններուն, յուսալով որ զանգուածային զօրաշարժի մը միջոցով, Մայր Հայրենիքի տնտեսական զարգացման ակընկալուած շարժիչ ուժին վերածուի:

Սակայն՝ ներկայ իրադրութեան իրապաշտ արժէտքումը կատարելով կարելի է եզրակացնել հետեւեալը.

Իտեալական Հայրենիքի կայացումը կը կարօտի համազգային Հաւատամքէ մը ներշնչուած քաղաքական կամքի ու ազգային արժէհամակարգի մը վրայ հիմնուած օրէնսդրական անսայթաք մոզոցառումներու, որպէսզի բարեկարգումներու երկարաշունջ ծրագիրները ըլլան հաւաստի ու արդիւնաբեր իրենց մշակումի ու իրագործումի բոլոր հանգրուաններուն:

Մինչ՝ Հօր Սփիոքի առասպելին իրականացումը կը կարօտի՝ նոյնանման գաղափարախօսական եւ ծրագրային նախադրեալներու, որպէսզի յարաջիկայ տասնեակներու ընթացքին չվերածուի Մատրասեան Յուշի, այլ ըլլայ իսկապէս հօր գործընկեր, իր ազգային պարտաւորութիւններով ու իրաւասութիւններով:

Նախ պէտք է յտակացնել Հայաստան-Սփիոք տնտեսական գործակցութեան կարելիութիւններու դաշտը, իր մարդասիրական օգնութեան եւ շահադիտական ներդրումային մարզերով: Ապա՝ փորձել քանակական արժէտքում կատարել Հայաստանի եւ Սփիոքի տնտեսական կարողականութեան, բնոյթին ու առաջնահերթութիւններուն վերաբերեալ:

Բացառիկ տազնապներու պարագային, մարդասիրական օգնութիւնը իր կարելորդ դերը կը կատարէ սահմանափակ ժամանակաշրջանի մը մէջ: Սակայն ոչ մէկ պարագային, մարդասիրական օգնութիւնը պէտք նկատուի որպէս պետական տնտեսական մնայուն եկամուտ, իր հոգեբանական ու հասարակական ժխտական անդրադարձներուն պատճառով:

Շահադիտական ներդրումի պարագային նկատուի պէտք է առնել շատ ատելի բարդ պայմաններ որոնք պէտք է բաւարարուին երկար ժամկետային ու վստահելի ու վստահութիւն ներշնչող գործարարական բարոյական (business ethics) ու օրենսդրական միջոցառումներով: Բնականաբար, շահադիտական ներդրումները կը կատարուին՝ նուազագոյն վտանգի ու առաւելագոյն շահի սկընկալութեամբ:

Եթէ Հայաստան Սփիւռք փոխ-յարաբերութիւնները պիտի մնան զգացական, մշակութային ու զբօսաշրջիկութեան մակարդակի վրայ, այժմ գոյութիւն ունեցող կառոյցները կը բաւարարեն այցելուներու հետաքրքրութիւնը: Իսկ եթէ Հայաստան կը նպատակադրէ վերածուիլ Սփիւռքի ամող թիւով Հայերու վերջնական Հայրենիքին, այդ պարագային ճանապարհը շատ ատելի դժուար է ու կը կարօտի նպատակասլաց աշխատանքի, բոլորովին տարբեր արժէքներով ստեղծելու համար իրապէս օրինաց երկիրը, որպէսզի հայրենասիրութիւնը վերածուի ամենօրեայ ապրող ներդրումի, իր գոյութեանական առաւելութիւններով ու իրագործումի անհատական ու հաւաքական գոհունակութիւններով:

Անշուշտ Հայաստան միակը չէ անցումային շրջանի տնտեսական դժուարութիւններ յաղթահարելու իր ճիգին մէջ գտնուելու նոյնաման մարտահրաւերներու առջեւ: Սակայն, ներքին բարեփոխումներու պարագային կարելիի սահմանը կը մնայ իրագործելի՝ քաղաքական կամքով ու հասարակական ատելի դրական արժէքներով, բարելաւելու պետական վարչամեքենան, գայն ձեռքբազատելով ներկայի օրինական դանդաղութիւններէն ու ապօրինի բազմաբնոյթ ու բազմամակարդակ գործառնութիւններէն:

Յետ անկախացումի առաջին տասնամեակը բնականաբար եղաւ անցումային շրջանի տնտեսական ու սոցիալական տազնապները դիմագրաւելու ու բարեփոխումներու միջոցով կարելի եղած չափով հասնելու օրինաց երկրի միջազգային չափանիշներուն: Նոյն տասնամեակին, Սփիւռքը իր երրորդ սերունդով, ապրեցաւ տարբեր բնոյթի անցումային շրջան մը, յոյսի ու յուսահատութեան հակասութիւններէն ծնած վերածնունդի ու ձուլումի անդրոշութիւններով:

Որպէս ազգ, Հայաստան եւ Սփիւռք գործակցաբար, վտանգաւոր յապաղումով, անհրաժեշտ է որ ծրագրենք մեր յառաջիկայ հարիւր, յիսուն ու քսանը հինգ տարիներու ապագան: Տեսիլքը, տեսական մտածողութիւնն ու երազը նոյնքան Էական են որքան ամենօրեայ գործնական իրագործումները: Առանց տեսիլքի ու յստակօրէն սահմանուած նպատակներու, որպէս հաւաքականութիւններ, մենք չենք կրնար ունենալ նպատակասլաց եւ համապարզակ աշխատանք, քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային եւ կրթական մարզերուն մէջ:

Յառաջիկայ տասնամեակը պէտք է վերածուի Հայաստանի եւ Սփիւռքի համագործակցութեամբ համապարփակ համահայկական ազգային երկար ժամկետային ծրագիրներու մշակման ու գործադրութեան շնչանի մը:

Համապարփակ ծրագիրը պէտք է ընդգրկէ, ազգային նպատակներու յստակացումը՝ պահանջատիրական, քաղաքական, տնտեսական, մշակութային ու Հայաստան-Սփիւռք փոխ-յարաբերութիւններու մարզերուն մէջ, այդ նպատակներուն իրագործումի յարմարաւետ միջոցներուն կազմակերպումն ու գործադրութիւնը, Հայկական ներուժի ամբողջական լարումով, հաւատալով Հայաստան Սփիւռք դրական, կառուցողական գործակցութեան երկարաշունջ աշխատանքին կարելորդութեան, ազգային ապահովութեան, հասարակական ու անհատական կենսական ոլորտներու մէջ:

Հայրենիքի հզօրացումը անպայման կ'ունենայ իր դրական դրսեւորումը Սփիւռքի մեր մշակութային ինքնութեան պահպանման աշխատանքին մէջ: Ինչպէս նաեւ, Սփիւռքի վերակազմաւորումը ազգային նպատակներու շուրջ, կ'ունենայ իր օգտաշատ դերը Հայաստանի բարգաւաճումին մէջ:

Արդ՝ էական է որ անյապաղ սաղմնաորուի Համազգային միաորոգ կառոյցի մը ստեղծման գաղափարն ու գործնական ծրագրաւորումը, նկատի առնելով անոր կենսական պահանջքը, ստանձնելու համար մեր ազգային հիմնահարցերու հետապնդման անյետաձգելի գերագոյն պատասխանատուութիւնը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՅՑ

Ազգային հիմնահարցերու ղեկավարման համար անհրաժեշտ է ունենալ մնայուն Համազգային կառոյց մը, իմաստուն, պայծառատես, լայնամիտ, համեստ, անաչառ, պատասխանատու, պարկեշտ, քաջ, պատկառելի անձնաւորութիւններէ կազմուած, առաջնորդելու համար մտաւորական արժանիքներով օժտուած ստեղծագործ ու հաւատաւոր միտքերն ու մասնագիտական փորձառութեամբ հարուստ աշխատակազմեր, որոնք գոհունակութեամբ ընդունին ծառայել համայնական շահերուն, անշշուք, հեռու հատուածական նկատառումներէ ու անհատական փառասիրութիւններէ, անկաշկանդ հունաւորելու համար ազգին ապագան, հաւաքական ապահովութիւնն ու բարօրութիւնը:

- 3.1. Գոյացումը Գերագոյն Խորհուրդի մը, կազմուած 7-11 հայրենի ու սփիւռքեան պատկառելի, երեց ու իմաստուն անձնաւորութիւններէ որոնք իրենց փորձառութեամբ, գիտութեամբ, իմաստութեամբ, համահայկական ու միջազգային կապերով, որպէս ազգային էական ու ճակատագրական հարցերու խորհրդատու, իրենց անշահախնդիր կարծիքը փոխանցեն Համահայկական Խորհուրդին: Որպէս խորհրդանշական ազգային գերագոյն մարմին, Գերագոյն Խորհուրդը կը մնայ անանուն, պահելու համար իր խորհրդատու ու անձեռնմխելի անկախութիւնը:
- 3.2. Կազմաւորումը Համազգային Խորհուրդի մը, մասնակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան ու Սփիւռքի Հայկական Համայնքներու ներկայացուցիչներէ: Խորհուրդը, որպէս խորհրդակցական մարմին՝ կը սահմանէ Հայաստանի ու Սփիւռքի համապարփակ արեւելումը՝ քաղաքական, ընկերային, տնտեսական ու մշակութային ոլորտներէն ներս: Խորհուրդի ընտրովի կազմը կ'ունենայ 120-180 անդամ, ըստ Հայաստանի Հանրապետութեան ու Սփիւռքի Հայկական Համայնքներուն համեմատական մօտաւոր քիւերուն:
- 3.3. Կազմաւորումը Համազգային Գործադիր մարմնի մը, կազմուած 25-35 անդամներէ, ներկայացնելու Հայաստանի Հանրապետութիւնն ու Սփիւռքը, Համազգային Խորհուրդի առած որոշումները իրագործելու համար: Գործադիր մարմինը կը ծրագրէ ու կը գործադրէ Համահայկական ծրագիրներ, հետեւեալ աշխատանքային կազմերու (task forces) միջոցով.
 - 3.3.1. Քաղաքական ու քարոզչական
 - 3.3.2. Տնտեսական ու ընկերային
 - 3.3.3. Մշակութային ու կրթական
 - 3.3.4. Փոխ-յարաբերութիւններու ու տեղեկատուութեան
 - 3.3.5. Օրինական ու կազմակերպչական
- 3.4. Նշանակումը Սփիւռքի Տեղական Գործադիր Խորհուրդներու, որոնք կ'իրագործեն Վերին Մարմիններու մշակած ծրագիրները:
- 3.5. Համահայկական Գործադիր Մարմինը, կը ծրագրէ անմիջական, միջին ու երկար ժամկետային ծրագիրներ, ու առաջնահերթութիւններու կարգով կը հսկէ անոնց գործադրութեան, Տեղական Գործադիր Խորհուրդներու միջոցաւ:
- 3.6. Վերոյիշեալ կազմակերպական կառոյցին ծրագիր կանոնագիրը կը մշակուի մարդկային իրաւանց օրէնքներու եւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան օրինագիծին մէջ, ինչպէս նաեւ՝ Սփիւռքի տարբեր երկիրներու օրէնքները նկատի առնելով:

Ը. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Սփիւռքը իր հասարակական կառույցներով տասնեակ տարիներէ իվեր կը շարունակէ կեդրոնանալ Հայաստանի հանրապետութեան եւ ցեղասպանութեան ճանաչումի աշխատանքներուն վրայ որոնք իրենց ներկայ կրատրական իրավիճակով վերածուած են գրեթէ ինքնանպատակ ծրագիրներու իրենց վախճանական անորոշութիւններով:

Հայաստանի հանրապետութեան ճանաչումը միջոցներ են հասնելու համար սահմանելի ազգային հիմնական նպատակներու, նոյնիսկ եթէ անոնք այժմ նկատուին՝ երազային: Հայաստանի հանրապետութեան ճանաչումը էական բայց հանգրուանային միջոցներ են վերագտնելու համար մեր անժամանցելի ազգային իրաւունքները պայմանաւ որ կարենանք մշակել ապագայի համապարփակ ու գործնական ծրագիրներ:

Համազգային գերագոյն ղեկավարութեան մը բացակայութեան, ազգային հիմնական նպատակներու սահմանումը կը մնայ անորոշ, վտանգելով ինքնութիւնը աճող սերունդներու:

Արդ, Հայաստանի Հանրապետութեան ու Սփիւռքի համայնքներու ղեկավարութեան ամենէն էական ու անյետաձգելի պարտականութիւնը պէտք է ըլլայ, ամենաբարձր մակարդակի վրայ, դրական ու գործնապաշտ երկխօսութեամբ ու բազմակողմանի բազմամակարդակ խորհրդակցութիւններով, քննարկել համազգային հիմնահարցերու առկայ վիճակը ու ընդհանուր համաձայնութիւն մը կայացնել ազգային հիմնական նպատակներուն եւ զանոնք իրագործելու աշխատանքին ու առաջնահերթութիւններուն շուրջ: